

1(676)

31.01.2023

Հրատարակվում է 1999թ. սեպտեմբերից

Հանաչել զինաստիճանն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

ՄԵՆԷ ՀԱՎԵՐԺ ԵՆԷ ՊՎՊԵՐԻՅՑ ԺԱՌԱՆԳԱՄ ԱՅՍ ՍՈՒՐԲ ՀՈՂԻ ՎՐԱ

Իհարկե, կրթության դերը դժվար է գերազանահատել: Հատկապես Արցախում, որտեղ ավելի քան 1600 տարի առաջ Մեսրոպ Մաշտոցը հայկական տարածքում առաջին դպրոցն է հիմնել, շատ լավ գիտեն կրթության դերն ու նշանակությունը: Ցավոք, հարևան Ադրբեջանի կողմից Արցախի երկարատև շրջափակումը ստիպել է մի առ ժամանակ դադարեցնել ուսումնական գործընթացը, և այս համատեքստում հասկանալ կարելի է դպրոցականների անափ ուրախությունը, երբ հարազատ դպրոցի կամարների տակ կրկին հնչում է դասի կանչող զանգը:

Շրջափակումն իր ծանր հետևանքներով հանդերձ, շատ բանով է փոխել երեխաների հոգեբանությունը: Նրանք ավելի հասուն ու պատասխանատու են դարձել իրենց արարքներում: Օրերս մայրաքաղաքի բնակչներից մեկի բակում տեսանք մի խումբ երեխաների, որոնք համերաշխ եռանդով վառելավայր էին ջարդում ու համաչափ շարքով դարձնում կողքի շինության պատի տակ: Պարզվեց՝ տղաները հարակից շենքերում են բնակվում: Տեսնելով, որ հարևանությամբ ապրող միայնակ տարեց մարդը փայտ է ջարդում, ինքնակազմակերպված, խմբով եկել են նրան օգնելու: Առանց ավելորդ պաթոսի ու ցուցամոլության: Ինքնակազմակերպվելը ստեղծված իրավիճակի թելադրանքն է, և դրանում, անկասկած, մաս դրական բան կա: Թեև կուզե այն առումով, որ անչափահաս ինքնուրույն գիտակցում է հանրորեն օգտակար լինելու անհրաժեշտությունը: Գիտակցում է և ինքնուրույն ձեռնարկում իրավիճակից բխող իր անելիքը: Կարծում ենք, այսպիսի օրինակները եզակի չեն ոչ միայն Ստեփանակերտում, այլև հանրապետության մյուս բնակավայրերում:

Կա նաև մեկ այլ ուշագրավ հանգամանք, որ նկատելի ենք դպրոցահասակ երեխաների հետ առանձին գրույցների ժամանակ: Եթե նախկինում արծակուրդների ընթացքում դպրոցականները, իրենց իսկ խոստովանությամբ, կարոտում էին միայն դասընկերներին, ապա ներկա դեպքում նրանք մտահոգված են դասերից ետ մնալու տխուր իրողությամբ: Ասել, թե այս մտահոգություն-ընկալումը բացառապես շրջափակման պարտադրյալ դասն է, գուցե անբողջական իմաստով ճիշտ չի լինի, բայց որ մենք անհրաժեշտ դասեր քաղում ենք մեր հարևանների անօրեն պարտադրանքներից, ակնհայտ է: Մեզ մնում է դրանք նպատակալաց օգտագործել ապագայամետ մեր նախաձեռնություններում:

Ի վերջո, ցանկացած շրջափակում էլ ժամանակավոր է, մինչդեռ մենք հավերժ ենք պապերից ժառանգված այս սուրբ հողի վրա:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՓԵՏՐՎԱՐԻ ԴԱՍԵՐԸ



35 փարի առաջ և այսօր

Ամեն տարի, երբ գալիս է Փետրվարը, առանձնահատուկ մի զգացում է պարուրում հոգիս, զգացում, որ վեր է հպարտությունից ու անբացատրելի է խորապես...

Փոթորիկների ու մորիկների բովով անցած ու ավելի կոփված Փետրվար, որ մեզ հիշեցնում է մեր հերոսական մաքառումների, հոգու արիության և բնական ու անմարդկային աղետներին դիմակայելու մեր անկոտրում կամքի ու չհանձնվելու ազգային կեցվածքի, հուսահատության պահերին մեկս մյուսին սատարելու, թիկունք կանգնելու, մեկի անձնական ցավը մեր հոգում կրելու ու մեկտեղելու, նվիրվելու ու կյանքի բոլոր հարվածներին դիմակայելու ծով համբերության ու լուսե հավատի մասին:

Անցյալ դարի 80-ականները դարեր շարունակ մեր պատմության մեջ մնալու են որպես ազգային-ազատագրական պայքարի, հայրենիքի ճակատագրով մտահոգ ազատամարտիկների հերոսական դիմադրության ու փայլուն հաղթանակների տարիներ: Տարիներ, երբ հայը գիտակցեց, որ ազգային ինքնության պահպանման ու հարատևման միակ ճանապարհը պայքարն է ու ամուր բռնուցք դառնալը:

Մարդկային միտքն ի գորու չէ ընկալելու այն անլուր տառապանքներն ու զրկանքները, որ մենք կրեցինք 80-ականներին՝ մեր Ազգային զարթոնքի երանելի տարիներին: Ընկճվելու, հուսալքվելու, ահաբեկվելու դրսևորումները խորթ էին մեր հոգում: Կար կամք, կար վճռակալություն ու հաղթանակի հասնելու մի սուրբ նպատակ:

Այսօրվա սերունդը պետք է լավ սերտի մեր պատմությունը ու զրկանքներին դիմակայելու հզոր կամք ունենա: Հաղթանակները երբեք հեշտ չեն տրվում, մանավանդ մեզ՝ հայերիս, որ միմիայն նվիրվել գիտենք, իսկ ճակատագրական պահերին՝ դավաճանվել անհուսալի ու շահամոլ դաշնակիցների կողմից: Ուրեմն մեզ մնում է ապավինել միմիայն մեր բազմին ու ազգային համախմբվածությանը:

Ազգային զարթոնքի դասերը շատ կարևոր են այսօրվա մարտահրավերներին դիմակայելու գործում: Դրանք դասեր են, որ արդիական են մնալու բոլոր դարերի համար, քանզի համառ ու վճռական պայքարի շնորհիվ են կերտվում ցանկալի հաղթանակները: Ներկա սերունդը պիտի հասկանա, որ մեր հարատևության ու գոյության միակ երաշխիքը պայքարի դրոշմը միշտ ձեռքում պահելու հաստատակամությունն է:

Կրկին Փետրվարն է, որի հետ ամեն անգամ նորանում ենք նորովի: 44-օրյա պատերազմում մեր պարտությունը (անհիմն մեղավորները ու արժանազան Աստծու դատաստանին) շատ թևաթափ արեց մեր ժողովրդին: Էլի դավաճանվեցինք, ու այդ պարտության խարանդ մեզմից յուրաքանչյուրն է կրում իր հոգում: Նշանակում է՝ մենք հանգստացանք դափնիների վրա ու կիսատ թողեցինք այդ սուրբ պայքարի վերջնական ավարտին հասնելու ճանապարհը: Հաղթեցինք ու չպաշտպանեցինք այդ հաղթանակը, ավելին՝ ինքնահանգստացանք ու թերազնահատեցինք ուսիսին, որն էլ օգուտեց մեր անգործությունից:

Անցել են երեսուցից երկար ու ձիգ տարիներ, և կրկին կանգնած ենք նույն մարտահրա-

վերների առջև. սա արդեն ավելի լուրջ վիճակ է, քան երեսուցից տարի առաջ: Այն ժամանակ ժողովրդի մեջ պառակտում չկար, կար միասնական ու համազգային մեկ անելիք՝ գերագույն ճիգով անկախության կերտում:

Այսօր, սակայն, երբեմն այլ խնդրումներ են հասարակության մեջ նկատվում. նյութական շահը մղվել է առաջին պլան: Ունեցողն էլ է դժգոհում, ձգտում ավելիին, չունեցողն էլ: Նույնիսկ ազգային գաղափարախոսության մեջ են նկատվում ընդգծված վայրկիվերումներ: Ահա հենց սա պիտի արմատախիլ արվի, և միմիայն սուրբ նպատակը առաջնորդի մեզ:

Երեսուցից տարի առաջ բոլորս մեկ մարմին էինք ու մեկ հոգի: Երեսուցից տարի առաջ՝ այս օրերին, մենք բուն ու դադար չունեինք. անընդհատ ցույցեր, հանրահավաքներ, գործադուլներ, բողոքի ու ըմբոստության այլ միջոցներ՝ մեր ձայնն աշխարհին հասցնելու համար: Պարզվեց, որ հավիտյան իր շահը հետապնդող խուլ ու կույր աշխարհը երբեք էլ չի փոխվում և չի կարող կանգնել արդարության համար պայքարող ժողովրդի կողքին՝ պաշտպանելու նրա ազգային շահերը, քանզի իր նյութական շահը վեր է ամեն ինչից:

Ուզում են՝ այսօր մեր ժողովուրդն էլ հասկանա, որ ամեն ինչ էլ պայմանավորված նյութականով: Ոչ միայն հացիվ, այլ նաև՝ բանիվ. այս իմաստությունը ինքնանպատակ է և ավելի հարի է մեր ժողովրդին, քան այլ ազգի: Գերի չդառնանք որկորին, հերթերում չփորձենք վիրավորել մեր հայրենակցին և չապրենք՝ միայն ուսուելու համար, այլ ուսուենք՝ ապրելու համար: Չչարանանք ազգակցի հանդեպ, որովհետև չարությունը հոգիներ է կրծում, ու վեհ գաղափարները մահանջում են՝ տեղիք տալով հոռի մտածելակերպի: Հիշենք՝ ամեն ինչ անցողիկ է, և մարդկայինն է մնալուն ու հավերժական: Այստեղ չեն կարող չհիշատակել 80-90-ականներից առաջադրող հիշողության մեջ դրոշմված մի դեպքի մասին: Սովի, զրկանքների, մութ ու ցուրտ օրեր էին. չկար սնունդ, լույս, գազ... Գյուղում մեր թաղում էր ապրում երջանակահիշատակ Աշխեն աբան (բոլորը նրան այդպես էին դիմում), որը հայտնի էր իր առատաձեռնությամբ ու մարդկային շատ արժանիքներով: Բացարձակապես ուսուելիք չունեինք ես ու ավագ որդիս, որն այն ժամանակ երեխա էր: Ունեինք միայն ցեմենտի գույնի այլուր (օգնություն էր սառը, անտարբեր աշխարհից...), որից հաց էինք թխում: Մի օր՝ դպրոցի ճանապարհին, Աշխեն աբան կանգնեցնում է ինձ ու մի բանկա խնեցու յուղ ու շոռ (իրենք կով էին պահում) հյուրասիրում ինձ (զուցե շատերը կասեն՝ ի՞նչ մեծ բան է): Ուրախությունից տեղս չէի գտնում: Շնորհակալություն հայտնեցի, վերցրի տվածը ու շտապեցի տուն: Մի շաբաթ շարունակ ես ու որդիս դրանով էինք գոյատևում՝ ամեն անգամ օրհնելով այդ բարի կնոջը:

Տարիներ են անցել, չկա Աշխեն աբան, բայց կա նրա բարի անունը, կա քաղցր հիշողությունը նրա մասին: Միշտ հարեհաս լինենք մեկս մյուսին:

Կրկին մեր հուզումների ու փոթորիկների Փետրվարն է, մեր հերոսական ու ազգային հպարտության Փետրվարը: Կրկին հուզված ու

փոթորկված է մեր Արցախ աշխարհը, որ ուժ է գտել իր մեջ ապրելու դաժան պարտությունից հետո: Կրկին արթնացել է մեր ազգային ոգին՝ լցված մեծ էներգիայով ու լավատեսությամբ, ու այլևս սխալվելու իրավունք չունենք:

Ոսոխի կողմից մոտ երկու ամիս տևող շրջափակումը չընկճեց մեր ժողովրդին: Արժանապատվորեն կրում ենք բոլոր զրկանքները (դրա փորձը մենք վաղուց ունենք) այն հավատով, որ յուրաքանչյուր գիշերվան հաջորդում է պայծառ առավոտը: Պարզապես պետք է գերծ մնանք անցյալի սխալներից ու ողջամիտ քայլեր ձեռնարկենք: Քանիցս արդեն համոզվել ենք, որ մեր ճակատագրի կերտողը մենք պիտի լինենք:

Դարձյալ հուզումների մեջ է Արցախը, դարձյալ ուսուել միտում է մեր ինքնությունը, դարձյալ ուղի է ելել արցախահայությունը՝ ի պաշտպանություն Արցախի ու մայր Հայրենիքի: Մենք այնքան պիտի ուժեղանանք, որ կարողանանք վերադարձնել հայրենիքի կորուսյալ տարածքները: Դրանք մեր ծանր վերքերն են, որոնք միայն մենք պիտի բուժենք: Սա նշանակում է, որ չպետք է կանչենք կենցաղային մանր-մունր հոգսերից ու աջքաթող անենք գլխավորը՝ հայրենիքի ճակատագիրը: Ամեն քայլափոխի պետք է հիշենք մեր այն մահատակ քաջազուններին, որոնք, բարձր պահելով հայրենիքի անունն ու պատիվը, չխնայեցին իրենց կյանքը ու գարնանային ծաղիկների պես պոկվեցին հարազատ թփերից՝ մեկընդմիջտ մնալով 18, 19, 20 տարեկան: Նրանց հիշատակը պարտավորեցնում է ապրողներին՝ երդվել սուրբ գերեզմաններին, որ շարունակելու ենք նրանց կիսատ թողած գործը, ապրելու են միմիայն Արցախում ու շենացնելու ենք այս գողտրիկ անկյունը: Այդ դեպքում միայն հանգիստ կլինեն նրանց հոգիները:

Հայրենակիցներ, ժամն է, որ վանենք մեզմից միջանձնային ու կուսակցական բոլոր տարածայնությունները և միավորվենք գլխավոր կուսակցության՝ Հայրենիքի փրկության գաղափարի շուրջ: Ոչ մի Արևմուտք ու Արևելք, Հյուսիս ու Հարավ չի լուծելու մեր ազգային խնդիրները. չտրվենք խաբկանքներին, որ մեր քարավանները կրկին չձգվեն դեպի խոր անապատները...: Անհաշտ լինենք մեռի ու բռնության հանդեպ, ինչպես մեր նախնիները, և հավատանք, որ լույսը մեր ձեռքով է բացվելու, մեր անձնուր կամքով ու նվիրյալների բանակով է գալու:

Չհեռանանք 88-ի Փետրվարի դասերից ու այլևս չապաքենք: Դրա իրավունքը մենք չունենք:

Հիշենք՝ Արցախը մեր հարատև կարտուն է ու սերը, նրանով է մեր կյանքն իմաստավորվում: Հիշենք նաև, որ Արցախը միաժամանակ ոսոխի մշտահողով խանոն է, որից երբեք չի ուզում հրաժարվել: Թե մի ցուփ Շամիրամ կամ մի մեռ Բել փորձի խլել մեզանից, կընկնի անշուշտ իր իսկ սրով:

Պահենք, փայլալայենք մեր սրբությունը, որ ապրելու իմաստ ունենա, քանզի Արցախի գոյությունը հայ ժողովրդի հավերժության առհավատյանն է:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԵՍԱԿԵՏ

12-ՐՈՂՅԻՆԵՐԸ ՀԱՆՁՆԵՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՅՅՊԵՏ ԴԵՏՔ ԵՆ, ԱՐԴՅՈՔ, ԱՅՂ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Հունվարի 10-ից մինչև 12-ը տասներկուերորդ դասարանի սովորողները հանձնեցին պետական ավարտական քննություններ «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից: Ինչպես տեղեկացանք ԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրեն Յուրի Քարամյանից, «Հայոց լեզու և գրականություն» քննությանը մասնակցել է 139, «Մաթեմատիկա»-ից՝ 365, «Հայոց պատմություն»-ից՝ 392 հոգի:

Ընդհանրապես, պետական ավարտական քննություններ 12-րդ դասարանի հանձնում են հունվարին կամ հունիսին այս երեք առարկաներից, գումարած «Ֆիզիկոլոգիա»-ից ստուգարք:

ԳԹԿ տնօրենը պարզաբանեց, որ ուսումնական պլանով 12-րդ դասարանի ծրագիրն ավարտում են առաջին կիսամյակում: 2-րդ կիսամյակում հիմնականում կրկնություն է, սովորողները պատրաստվում են բուհերի ընդունելության քննություններին: Դրա համար եթե որևէ մի աշակերտ չի հանձնելու միասնական քննություններ այդ երեք առարկաներից և ընդհանրապես ցանկություն չունի ուսումնասիրել դրանք, ուշադրություն ուզում է սեռել մյուս առարկաների վրա, իրավունք ունի հանձնել պետական ավարտական քննություններ հունվար ամսում: Այս դեպքում դեկտեմբերին փակվում են նրանց կիսամյակային և տարեկան գնահատականները: Հարց կարող է ծագել. եթե արդեն սովորողի տարեկան գնահատականը դրված է, ինչու է նա տվյալ առարկայից հանձնում պետական

ավարտական քննություն: Յու. Քարամյանն ասաց, որ ատեստատում դրվում են նաև այդ երեք առարկաներից պետական ավարտական քննությունների գնահատականները և «Ֆիզիկոլոգիա»-ից ստուգարքը:

Պետական քննությունները սովորողները հանձնում են յուրաքանչյուր իր դպրոցում: Յու. Քարամյանը տեղեկացրեց, որ ԳԹԿ-ն բոլոր ուսումնական հաստատություններն ապահովել էր թեստերով՝ փակ ծրարներով, կնիքված: Դպրոցների տնօրենները կամ կրթության բաժինների վարիչները ներկայացել են ԳԹԿ, որը ըստ դպրոցի ներկայացրած հայտի մասնակցող երեխաների թվին համապատասխան թեստեր է տրամադրել: Դպրոցի տնօրենը ծրարը բացում է քննության ժամանակ՝ երեխաների մոտ: Գրավոր աշխատանքներն ստուգվում են ուսումնական հաստատություններում: ԳԹԿ-ի կողմից գնահատման սանդղակները և առարկայական կարգերն ու անհրաժեշտ նյութերը լրիվությամբ ուղարկվում են թեստերի հետ: Ոչ մի խնդիր չկար: Յու. Քարամյանն ասաց, որ միայն մեկ դպրոցից են գանգել, որ մեկ երեխա բացակայում է: Հարցրել են, թե նա կարո՞ղ է լրացուցիչ հանձնել, եթե ներկայանա: Պատասխանել է, որ՝ ոչ, նա կհանձնի ամռանը: ԳԹԿ-ի կողմից գրություն է ուղարկվել բոլոր ուսումնական հաստատություններ այն մասին, որ մինչև հունվարի 28-ը կվերցվեն գնահատված գրավոր աշխատանքների վերլուծությունները, որպեսզի արվի ընդհանուր վերլուծություն, թե քանի երեխա է ստացել 1-7 միավոր, որպեսզի նախատեսեն նրանց վերաքննությունները հուլիս ամսում:

«Ուսումը կապ չունի իրավիճակի հետ: Երեխաները պետք է շարունակեն իրենց ուսումը: Դրա բացը հետագայում չենք կարող լրացնել: Սուտ է, երբ ասում են, թե բաց թողածը կլրացնեն մեկ շաբաթում կամ մեկ ամսվա ընթացքում: Երեխաների կրթությունը պետք է անընդհատ լինի»,- համոզված է ԳԹԿ տնօրենը: Պետական ավարտական քննությունների մասով խնդիր թերևս միայն եղել է որոշ դպրոցների տնօրենների՝ Արթուրյանի կողմից Արցախի կյանքի ճանապարհը փակվելու հետևանքով վառելիքի սղության պատճառով

տեղաշարժման սահմանափակ հնարավորությունը. գյուղերից ԳԹԿ դժվարությամբ ներկայանալը՝ թեստերի ծրարներն ստանալու համար: Բայց բոլորն էլ տարբեր միջոցներով ներկայացել են. որը ծանոթ-բարեկամի մեքենայով, որը՝ տաքսիով կամ երթուղայինով: Այնպես որ, քննություններն սկսվելու ժամին ծրարները եղել են քննասենյակներում: Չի էլ եղել, որ թեստերը չհամապատասխանեն մասնակցների թվին: Ամեն ինչ հարթ է ընթացել: Պարզապես եղել են դեպքեր, երբ աշակերտը չէր հայտագրվել պետական ավարտականին, բայց հետո ցանկություն է ունեցել: Յու. Քարամյանն ասաց, որ իրենք ընդառաջել են նմաններին. հարցը լուծվել է տեղում: Եթե հնարավորություն է եղել լրացուցիչ թեստ ուղարկելու (իհարկե, եթե ուսումնական հաստատությունը մոտիկ տարածքում է), ուղարկել են, եթե ոչ՝ թույլատրել են քննության ժամանակ ծրարը բացելուց հետո մեկ թեստ պատճենահանել և տրամադրել երեխային, բայց միայն՝ ԳԹԿ-ի թույլտվությամբ: Երկրորդ, 12-րդ դասարանի մինչև դեկտեմբերի 1-ը պետք է արդեն կողմնորոշված լինեն, թե ինչ է հանձնելու, բայց եթե լինում են դեպքեր, որ նա հետո է որոշում, ԳԹԿ-ն խնդիր չի ստեղծում նրա համար:

Այլ հարց է, թե որքանով են նպատակահարմար պետական ավարտական քննությունները: Եվ՝ ոչ միայն մեր իրավիճակում: ԳԹԿ տնօրեն Յուրի Քարամյանն առաջին տարին չէ, որ բարձրաձայնում է պետական ավարտական քննությունների ավելորդ լինելու մասին: Այդ մասին առաջարկություն է ներկայացրել նաև ՀՀ ԳԹԿ: Եվ ահա թե ինչպես է նա դա պատճառաբանում:

Այն սովորողները, ովքեր միասնական քննություն են հանձնում «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» առարկաներից, հասկանալի է, որ նրանք պետական ավարտական քննություններ չեն հանձնում դրանցից, քանի որ միասնական քննության արդյունքներում առկա է նաև պետական ավարտական մասը: Նույն թեստը, որն ընդունելության համար է նախատեսված, պարունակում է Ա մաս, որը վերաբերում է պետական ավարտականին և բաղկացած է 50 առաջադրանքից, ինչպես՝

պետական ավարտական թեստում:

Սա՝ մեկ: Երկրորդ. տարիների փորձը ցույց է տվել, որ պետական ավարտական քննությունների գնահատականները գրեթե նույնն են, ինչ տարեկան, այսինքն՝ պետական ավարտական քննությունը դառնում է ձևական:

Երրորդ. պետական ավարտական քննությունները պարտադիր են վերը նշված երեք առարկաներից: Իսկ բնագիտական առարկաներից կամ օտար լեզուներից չեն հանձնվում: Բայց մի՞թե այս առարկաները պակաս կարևոր են: Եթե ընդհանրապես ընդունելության քննություններ չլինեն, այլ հարց է, պարտադիր պետք է լինեն պետական ավարտական քննություններ, բայց եթե կան, ուրեմն, ինքնաբերաբար պետական ավարտականը դուրս է մղվում:

Չորրորդ. անհարկի ծախսերը: Յու. Քարամյանը մի թեթևակի հաշվարկ է ներկայացնում: Այս սուղ պայմաններում հազարից ավելի թեստ են բազմացրել՝ յուրաքանչյուրը բաղկացած 4-5 Ա3 թերթից: Դա առավելագույն կազմում է 10 տուփ Ա3 թուղթ: Բացի դրանից, ծրարներ, թեստերը ՀՀ-ից բերելու ավելորդ դժվարություն և լարվածություն՝ հատկապես ծնողները:

Եվ ևս մի շատ կարևոր դիտարկում. եթե սովորողը նպատակ չունի բուհ ընդունվել, իմաստը ո՞րն է, որ 9-րդ ավարտելուց հետո երեք տարի (10-11-12-րդ դասարաններ) սովորի: Հիմնական դպրոցն ավարտելուց հետո ավելի նպատակահարմար է, որ նա գնա միջին մասնագիտական կամ արհեստագործական ուսումնական հաստատություն, մի մասնագիտություն սովորի և մտնի աշխատաշուկա:

Արդեն քանի տարի այս տեսակետը հնչեցնող Յուրի Քարամյանը գտնում է, որ միևնույն կրթական դաշտում լինելով հանդերձ, պարտադիր չէ այստեղ ամեն ինչ պատճենել ՀՀ-ից, կարող ենք մեր տեղական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ինքնուրույն որոշումներ կայացնել: Իսկ ստեղծված իրավիճակում դա պարզապես խիստ անհրաժեշտ է:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ Է ԲԱՅՈՒՄ

Օրերս Եգիպտոսի թագավորն այցելեց Հայաստանի Հանրապետություն, ինչը գնահատվեց որպես պատմական իրադարձություն, քանի որ այդ երկրի ղեկավարը պատմության մեջ առաջին անգամ է պաշտոնական այցով ժամանում Հայաստան: Ըստ պաշտոնական հաղորդագրության, ՀՀ իշխանությունների հետ համդիպման ժամանակ ղեկավարները ներկայացրել են տարածաշրջանային և իրենց երկրների խնդիրներն ու սեփական անհանգստությունները: Եգիպտոսի նախագահը կարևորել է հայ-եգիպտական բազմաշերտ համագործակցությունն առաջ մղելու անհրաժեշտությունը ինչպես առևտրատնտեսական, այնպես էլ դիվանագիտական հարաբերությունների զարգացման ուղղությամբ: Երկու երկրների կառավարությունների միջև կնքվել են տարբեր ոլորտներում համագործակցության հուշագրեր:

2022թ. նոյեմբերի վերջին «Արցախյան հիմնախնդիրը արդի քաղաքական գործընթացների հովվություն» թեմայով Ստեփանակերտում կայացած գիտագործնական համաժողովում դիվանագետ, արաբագետ Ռուբեն Կարապետյանը, ելույթ ունենալով, արտահայտել էր այն միտքը, որ 2020թ. պատերազմից հետո, քաջ գիտակցելով, թե ինչ իրավիճակում ենք մենք հայտնվել, պետք է տասնապատկենք մեր ջանքերը և փորձենք ոչ սովորական լուծումներ գտնել և միգրացիոն մասնաշաղկերից և միգրանտների հետ հարաբերություններ, որոնց ոչ բավարար ուշադրություն ենք դարձրել: Եվ որպես այդպիսի մի հնարավորություն է նա ներկայացրել մեր անմիջական տարածաշրջանը, որը կոչվում է Մերձավոր Արևելք: Ըստ նրա՝ Մերձավոր Արևելքը մեր անմիջական անվտանգային միջավայրն է, որը պատմության ընթացքում ուղղակի և անուղղակի ձևով ազդել է Հայաստանի ու Արցախի բնական կենսագործունեության ապահովման ու զարգացման վրա: Եվ նկատել է, որ Հայաստանի անկախությունից հետո բավարար ուշադրություն չենք դարձրել ռազմավարական այդ կարևոր տարածաշրջանի վրա: Դիվանագետի այս և մյուս դիտարկումներին մենք համազանգալից անդրադարձել ենք «Լուսարար» թերթում: Հիշեցնում կարգով նշենք, որ նա արաբական աշխարհի հետ հարաբերությունները զարգացնելու գործում կարևորել է տարածաշրջանային խաղաղության միջև առկա բազմաբնույթ հակասությունների հմտորեն օգտագործումը, հայ-արաբական բարիդրացիական հարաբերությունների վերսկսումը, մշակութային կապերի ստեղծումը:

Իսկ որ հայ և արաբ ժողովուրդների բարեկամությունը գալիս է դարերի խորքից, փաստագրված է տարբեր փաստաթղթերում և շրջանառվում է բանավոր՝ որոշ շրջանակներում: Այսպես, Երուսաղեմ այցելող հայերը (այդ թվում՝ արցախցիները, որոնց կազմում մի քանի տարի առաջ տողերիս հեղինակն էր), ծանոթանալով ավետյաց երկրում հայկական հզոր հետքին, տեղեկանում են, որ 626թ. Երուսաղեմի Հայոց պատրիարք Աբրահամը, տեսնելով իսլամական ընդլայնման ու նվաճման վտանգները, 40 մշակավոր հայերով պատվիրակության հետ մեկնել է Մեքքա՝ իսլամական սուրբ քաղաքը՝ Մուհամմեդ մարգարեի հետ հանդիպելու: Մարգարեն հայներին ընդունել է սիրով ու հարգանքով և լսել Աբրահամ պատրիարքի առաջարկները: Հայկական պատվիրակությունը հայտնել է մարգարեի հետ համագործակցելու իր պատրաստակամությունը և խնդրել նրա պաշտպանությունը: Համդիպման ավարտին Մուհամմեդ մարգարեն հրովարտակ էր հրապարակել, որում մասնավորապես նշված էր. «Ես՝ Մուհամմեդ մարգարեն, Աստծո և իմ շուրջը գտնվող 30 անձանց վկայությամբ շնորհում եմ իմ հովանավորությունը և պաշտպանությունը և բաժանում եմ իմ ողորմությունը հայոց եկեղեցիներին, որտեղ էլ որ դրանք գտնվեն՝ Երուսաղեմի ամբողջ տարածքում, Քրիստոսի սուրբ գերեզմանին, Սուրբ Հակոբ եկեղեցուն, Բեթղեհեմի եկեղեցուն, բոլոր աղոթատեղիներին, մենաստաններին, Գողգոթայի ճանապարհին և սրբատեղիներին: Նաև ապահովում է վստահեցնում են, որ իմ պաշտպանությունը տարածվում է նաև քրիստոնյա բլուրների, հովիտների ու քրիստոնյաների եկամտի հաստատությունների վրա: Այս բոլորը հայտարարում եմ իմ մարգարեի անունով և իմ հավատացյալ մահմեդականների անունով»:

Մուհամմեդ մարգարեն հանձնարարել էր հետմորդներին հարգել իր հրովարտակը և գործադրել դրա բոլոր մանրամասնությունները: Այդ հանդիպմանը ներկա էր Խաթաբի որդի Օմարը, որը հաջորդեց մարգարեին և հրատարակեց նույնանման մի հրովարտակ՝ հաստատելով մարգարեի հրովարտակը: Ի դեպ, նրանց հետմորդներից մեկի հրովարտակից մի փոքր մաս՝ քարե սալիկի վրա արաբերենով արձանագրված, տեղադրված է Երուսաղեմի սուրբ Հակոբ եկեղեցու մուտքին:

Ըստ «Կալիֆոնիա կուրիեր» շաբաթաթերթի հրատարակիչ Հարութ Սասունյանի՝ Մուհամմեդ մարգարեի հրովարտակը, բացի արժեքավոր պատմական փաստաթուղթ լինելուց, ցույց է տալիս, որ հայ քրիստոնյաներն ու մուսուլմանները վայելում էին ամենաջերմ հարաբերությունները ինչ ժամանակներից սկսած մինչև մեր օրերը: Հայերը պետք է տարածեն մարգարեի այս կարևոր հրովարտակը, ինչպես նաև նրա հետմորդների հրո-

ԼՈՒՍՏ ՎԵՏԱԳԻԾ

ՍԵՂԱ ՎԵՐՂԻ ՓԻՐՈՒՄՅԱՆ



99 տարեկան հասակում կյանքից հեռացավ ԼՂՀ վաստակավոր մանկավարժ Սեղա Վերղիի Փիրումյանը:

Սեղա Փիրումյանը ծնվել է 1924թ. մարտի 22-ին Չանաղչի գյուղում՝ բանվորի ընտանիքում:

1942 թվականին ավարտել է Բաքվի թիվ 9 հայկական միջնակարգ դպրոցը: 1950-ին ընդունվել է 1952-ին ավարտել է անգլերեն լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացը: Նույն թվականին ընդունվել է Ադրբեջանի պետական մանկավարժական ինստիտուտի անգլերեն լեզվի բաժինը՝ հեռակա ուսուցմամբ և ստացել միջնակարգ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցիչ որակավորում:

1952-1953 ուսումնական տարում աշխատել է Ստեփանակերտի երեկոյան դպրոցում: 1953-1981 թվականներին անգլերեն է դասավանդել Ստեփանակերտի Մաքսիմ Գորկու անվան թիվ 1 միջնակարգ դպրոցում:

Ստեփանակերտի պետական մանկավարժական համալսարանի բացման առաջին իսկ օրվանից հրավիրվել է աշխատանքի՝ որպես անգլերեն լեզվի և գրականության դասախոս:

Կրթական ոլորտում պահանջված, աշակերտների կողմից սիրված մանկավարժ էր Սեղա Փիրումյանը: Լավ տիրապետում էր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին: Ստեփանակերտում անգլերեն լեզվի առաջին ուսուցիչն էր:

Աշխատանքային տարիների ընթացքում վաստակաշատ մանկավարժը տվել է բազմաթիվ շրջանավարտներ. նրանցից շատերը շարունակել են իրենց ուսուցչի մասնագիտական ուղին:

Սեղա Փիրումյանը եղել է ուսուցիչների որակավորման մարզային ինստիտուտի օտար լեզուների հանձնաժողովի նախագահը:

Ուսուցիչների որակավորման մարզային ինստիտուտի կողմից Սեղա Փիրումյանի առաջնակարգ աշխատանքային փորձն ուսումնասիրվել է տարածվել է օտար լեզվի ուսուցիչների շրջանում:

1970 թվականին Սեղա Փիրումյանը պարգևատրվել է Վ.Ի. Լենինի 100-ամյակի մեդալով և պատվոգրերով:

2008 թվականին ԼՂՀ նախագահի հրամանագրով Սեղա Փիրումյանին շնորհվել է ԼՂՀ վաստակավոր մանկավարժի կոչում:

ԱՅ ԿԳՄՍ նախարարությունն իր վշտակցությունն ու զորակցությունն է հայտնում Սեղա Փիրումյանի ընտանիքի անդամներին, հարազատներին և մտերիմներին:

ԱՅ ԿԳՄՍ նախարարություն

ԳՆԱՑ՝ ԻՐԵՆՈՎ ՄԻ ՇՈՂ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԵՐԿՆԱՅԻՆ ԱՐՔԱՅՈՒԹՅԱՆԸ

Նորին մեծություն ժամանակն իր խստագույն օրենքները չի տարածել նրա վրա՝ հավանաբար ընկրկելով Մայր բնությունից նրան տրված գեղեցկության, մարդկային վեհ արժանիքների առջև: Կարծես երեկ էր՝ ինչ տարի առաջ, երբ մտերմիկ շրջապատում մշտեցինք նրա՝ մեր սիրելի ուսուցչուհի Սեղա Փիրումյանի, որին բոլորը Սեղա Վերղինեմ էին կոչում, ծննդյան 90-ամյակը: Դարձյալ նույն ժպտուն դեմքով, աչքերի շողով գերող, կանացիության տիպար կինն էր՝ տարիքը հեռացնող գրնգուն ծայրով: Ծանաչողների համար նա միշտ երիտասարդ էր, կենսախիմի, լավատես: Նրա մասին միայն պետք է խոսել ամենա-գերադրականով, և դա չափազանցություն չի լինի: Ռուս մեծ գրող Ա. Չեխովի այն խոսքը, թե՛ «Մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի. և՛ դեմքը, և՛ հագուստը, և՛ մտքերը», ասված է հենց Սեղա Վերղինեմայի մասին: Երբ նա հայտնվում էր դպրոց տանող ճանապարհին, գեղեցկանում էր մեր քաղաքը: Ի դեպ, 90-ամյակին անանկալ այց կատարած նրա նախկին աշակերտ, այդ ժամանակվա ԱՅ նախագահ Բակո Սահակյանն էլ իր շնորհավորանքի խոսքում ասաց. «Իմ տարեկիցների պես ես էլ սովորական պատանի էի և, խոստովանում եմ, միշտ հիանում էի Սեղա Վերղինեմայի կերպարով: Ուզում եմ, որ Դուք շարունակեք գեղեցկացնել մեր երկիրը Ձեր ներկայությամբ, Ձեր հատուկ բուրմունքով, որով Աստված օժտել է Ձեզ»:

Շուրջ չորս տասնամյակ նա անգլերեն լեզու է դասավանդել Ստեփանակերտի հ. 1 միջնակարգ դպրոցում, որն այդ տարիներին գտնվում էր ներկայիս «Ամենիա» հյուրանոցի և Ազգային ժողովի շենքի տեղում: Չնայած այսօրվա պես անգլերենը մոդայիկ չէր, բայց բոլոր աշակերտները սիրում էին այդ առարկան, քանզի այն դասավանդող Սեղա Վերղինեմային էին, քիչ է ասել սիրում, պաշտում էին, որի համար վատ աշակերտ չկար: Նա անխտիր սիրում և ուշադրության էր արժանացնում բոլորին և յուրաքանչյուրին սովորեցնում նրա հնարավորություններին չափ: Իսկ անգլերենի դասաժամերից յուրաքանչյուրը մի-մի հետաքրքիր ներկայացում էր. ինչպես էինք անգլերենով մենք դիմավորում մեր սիրելի ուսուցչուհուն՝ մի քառատող ողջույնի խոսքով, և ինչ-

պես էր նրան հաջողվում 45 րոպեի ընթացքում և՛ բոլոր աշակերտների տնայինները ստուգել, և՛ բոլորին հարցում անել, և՛ նոր դասը բացատրել, և՛ «Եսկուրսիա» կազմակերպել դեպի Անգլիա, որտեղ աշակերտը հանդես էր գալիս Լոնդոնում հայտնված գրասաշրջիկի դերում, որը պետք է կարողանար երկխոսությամբ գտնել պահանջված տեղը, խանութում՝ անհրաժեշտ ապրանքը, ռեստորանում՝ ուտելիքը և այլն, դասն ավարտել անգլիական դասական երգ կատարելով և ուսուցչուհուն՝ հրաժեշտի խոսքով: Իսկ դեռ 5-րդ դասարանում «Ռոսիա» կինոթատրոնում միասին դիտած մեր առաջին ֆիլմը «Ջեյն Էյր»-ն էր: Սիրում էին սաները նրա ավանդած օտար, բայց նրա շնորհիվ վարակիչ դարձած անգլերեն լեզուն, ու այդ սերը փոխադարձ էր: Այդ սիրուն արժանանալու համար պետք է լինել լավ մարդ, ազնիվ, արդարամիտ, ունենալ մասնագիտական խոր գիտելիքներ և կիրթ վարվելակերպ: Նման երջանիկ մանկավարժներից էր Սեղա Վերղինեման: Սիրում էին նրա ազնվական կեցվածքի, անսահման բարության և մանկավարժական տակտի համար: Նա եղել է պահանջկոտ, բայց ոչ ավելորդ խստությամբ: Եվրոպական չափանիշ կոչված երևույթը մեզ համար Սեղա Վերղինեման էր: Եվ ինչո՞ւ միայն մեզ համար: Նա համընդհանուր սեր էր վայելում առհասարակ բոլոր ճանաչողների կողմից:

Տասնյակ սերունդներ են անցել նրա ձեռքի տակով, նա եղել է Ստեփանակերտի առաջին անգլերենի ուսուցիչը, դաստիարակել է մի քանի տասնյակ անգլերենի ուսուցիչներ:

90-ամյակի կապակցությամբ մեզ տված հարցազրույցի ժամանակ նա ասել է. «Ուսուցիչը միշտ պետք է հիշի և նույնն էլ ներշնչի իր աշակերտներին, որ կյանքի մեծագույն արժեքներն են բարությունը, վայելուչ պահվածքը: Դրանք անանց արժեքներ են, որ ոչ մի փողով չես գնի»:

Այս չափանիշներով է միշտ առաջնորդվել սիրված ուսուցչուհի Սեղա Փիրումյանը, որի վաստակը պետական բարձր՝ «ԼՂՀ վաստակավոր մանկավարժ» կոչումով գնահատվել է 2008թ.:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

վարտակները՝ հակազդելու թուրքիայի ու Ադրբեջանի տարածած հակահայկական քարոզչությանը իսլամական աշխարհում:

Ալիևը անցյալ տարվա նոյեմբերի 8-ին Շուշիում հայտարարեց, թե իբր մզկիթներ ոչնչացնող Հայաստանը չի կարող ընկերություն անել մուսուլմանական երկրների հետ, որ Հայաստանը իբր ագրեսիվ քաղաքականություն է վարում ոչ միայն Ադրբեջանի, այլև ողջ իսլամական աշխարհի դեմ: Ինչպես նկատել էր դիվանագետ Ռ. Կարապետյանը, ակնհայտ էր, որ հասցեատերը Իրանն էր, բայց այն ուղղված էր նաև արաբական աշխարհին, որի հետ մեր-ձեցումից Բաքուն վտանգ է տեսնում:

Հայ-արաբական բարեկամությունը փաստող՝ բացի վերը նշված կրոնական գործոնից, այլ կապեր էլ կան: Ըստ պատմաբանների, հայերը Եգիպտոսում հայտնվել են հնագույն ժամանակներից (մ.թ.ա. 4-րդ դար): Տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ հայերի թիվն այստեղ մեծացել է: Չմոռանա՞նք, որ Եգիպտոսի բարեկամ ժողովուրդն առաջիններից էր, որն ապաստան տվեց Օսմանյան կայսրությունում Ցեղասպանության վայրագություններից փրկված հազարավոր հայերի, և աշխարհասփյուռ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա այն հյուրընկալությունը, որը մեր հայրենակիցներին ցուցաբերվեց: Իսկ Եգիպտոսի համայնքը դարձել է երկու բարեկամ երկրներն իրար կապող կարևորագույն կամուրջներից մեկը: Կահիրեի ամենամեծ համալսարանում, որն ունի 350 հազար ուսանող, 2007թ.

բացվել է հայագիտական կենտրոն, և առաջին գիրքը արաբերենով, որը հրատարակեց, նվիրված էր Արցախին և արցախյան հակամարտությանը:

Հայ համայնքը Եգիպտոսին տվել է բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական-քաղաքական գործիչներ: Եգիպտոսի առաջին վարչապետը եղել է Նուբար փաշա Նուբարյանը: Նրա անունով փողոցներ են կոչվել Կահիրեում և Ալեքսանդրիայում: Եգիպտոսի համայնքում են հիմնադրվել Սփյուռքի երկու համազգային կառույցները՝ ազգային բարերար Նուբար Փաշայի նախաձեռնությամբ՝ Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) և Համազգային հայ կրթական ու մշակութային միությունը:

Անդրադառնալով նորից Եգիպտոսի թագավորի այցին՝ մեջբերենք նաև արցախցի քաղաքական մեկնաբան Արթուր Օսիպյանի ֆեյսբուքյան գրառումը, որում ասվում է. «Եգիպտոսի նախագահը Երդողամի ոխերին թշամին է և բնականաբար՝ մեր պոտենցիալ դաշնակիցը, ինչպես Ֆրանսիան, Յոնկաստանը, Յունաստանը, Իրանը...»

Եվ նրա այդը Հայաստան՝ մի կողմից, հնարավոր է, աշխարհաքաղաքական փոթորիկի նախանշան է, որը կցնցի երկրագնդի կեսը, մյուս կողմից՝ ձևավորելու կոալիցիա, որում Հայաստանի հետաքրքրությունները կհամընկնեն կոալիցիայի երկրների հետաքրքրությունների հետ: Թուրք-ադրբեջանական բլոկին Հայաստանը կարող է հաղթել միայն կոալիցիայով: Չպետք է մոռանալ, որ Ադրբեջանը, որը մի քանի ան-

գամ Հայաստանին գերազանցում է ինչպես սպառազինությամբ, այնպես էլ ժողովրդագրական ու տնտեսական ցուցանիշներով, մեզ վրա հարձակվեց ոչ թե միայնակ, այլ կոալիցիայով: Այդ պատճառով կոալիցիայի ձևավորումը մեր թշնամիների դեմ պայքարում, որը, ըստ էության, պայքար է միջազգային ահաբեկչության դեմ, Հայաստանի ու Արցախի կարևորագույն խնդիրն է»:

Ի դեպ, հայ-եգիպտական «կոալիցիայի» թերևս առաջին նախադեպը նկարագրված է «Սասնա ծռեր» էպոսում, երբ Մեծ Միերը կառավարել է Սասունը Արաբական տիրապետության շրջանում: Միերի կառավարման առաջին տարիներին Սասունը հարկատու էր Մըսրին (Եգիպտոսի հին անունն է): Նա կարողանում է Սարա Մելիքի հետ համաձայնության գալով՝ Սասունը դարձնել Եգիպտոսից անկախ երկիր: Մահից առաջ Մըսրա տերը պատվիրում է կնոջը՝ Իսմիլ խաթունին Միերից որդի ունենալ, որպեսզի իր երկիրն էլ ժառանգի նրա զարմի հզորությունը: Ինչպես գրված է էպոսում, Միերը յոթ տարի մնում է Եգիպտոսում, որից ծնվում է Սարա Մելիքը: Մի խոսքով, հայ-եգիպտական հարաբերությունները խարսխված են նաև արյունակցական՝ զենետիկ հենքի վրա:

Երբ այս մասին վերը նշված գիտագործական համաժողովի ընդմիջմանը տողերիս հեղինակը հարցրեց բանախոս Ռ. Կարապետյանին, նա չժխտեց այս հանգամանքը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՇՐՋԱԹԱԿՎԱԾ ԱՐՃԱՆՍ

Ի՞նչ Արցախ, այս ծանր օրերին դու ավելի ես քաղցրացել: Ժողովուրդդ ավելի ու ավելի է մտածում քո ճակատագրի մասին: Չգիտի՞ ինչ անի, ինչպես գործի, որ քեզ փրկի կործանումից, որ չընկնես մեր դիտերին թշնամու տիրապետության տակ: Այդ անիրավ ազգը նորից չի հասկանում, որ Արցախը հայի հող է ու կմնա, մեր ճանապարհը փակելով՝ ձեր այդ քայլով խայտառակում եք ձեր ազգին: Ու դրանով չէք ընկճի դուք մեր ոգին: Լավ հիշեցեք, որ կա գիտուն մի ասացվածք՝ «Ուրիշի դժբախտության վրա երբեք չես ստեղծի քո երջանկությունը: Ու վախեցիր, որ քո սարքած ծուղակի մեջ հանկարծ դու չընկնես ազգովին»:

Աշխարհը անտարբերություն է ցուցաբերում քո ճակատագրի նկատմամբ և հիմնականում հավատում է բռնապետի տարածած սուտ տեղեկություններին: Եվ յուրաքանչյուրն իր տնտեսական շահերից ելնելով՝ չի ուզում տեսնել ճշմարտությունը: Բոլորը շատ լավ գիտեն, որ Արցախը դարեր ի վեր եղել է հայկական հող:

Նույնիսկ Ադրբեջանի բռնապետը դա լավ գիտի, բայց, խաբելով իր ժողովրդին և աշխարհին, ուզում է ստոր ճանապարհով տիրանալ մեր չքնաղ Արցախին ու նրա ընդերքում գտնվող գանձերին: Սակայն դա մենք թույլ չենք տա, քանի որ դա կլինի նոր Ցեղասպանություն և Արցախի հայաթափում:

Բայց ի՞նչ հոգում կա մի լույսի շող, որ ճշմարտությունը քրի երես դուրս կգա, քաղաքակիրթ աշխարհը կհասկանա այդ ու հարցին կտա ճիշտ պատասխան: Ի՞նչ ժողովուրդ, մի ընկճվիր: Կգա՞ օրը մեր երազած: Մենք կազատվենք այս քաոսից: Ու մենք կապրենք մեր Արցախում: Խաղաղ ու ջինջ երկնքի տակ...

Ես հավատում եմ մեր ապագային, որ ամեն ինչ լավ կլինի:

Սեղա ԲԱՂԱՍՅԱՆ
Թաղավարից բռնապետահանված
թոշակառու մանկավարժ

ՄԵԿԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԻ ԲԱՆ ԵՐԵՔ ԴԱՐ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ՀԱՅԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Պատմություն և անհատ: Ինչպիսի՞ հարաբերություններ են ձևավորվում նրանց միջև. անհատները կարող են ազդել պատմության վրա: Պատմությունը ինչպե՞ս է ազդում անհատի վրա: Այս փոխհարաբերությունների մասին դասագրքերում կային թեմաներ, և ես հիշում եմ այսպիսի մեկնաբանություն այդ փոխհարաբերությունների մասին: Անհատները, ճիշտ է, չեն կարող փոխել պատմության ընթացքը, բայց նրանք կարող են որոշիչ դեր ունենալ պատմական իրադարձությունների զարգացման գործում, ճանապարհ հարթել պատմական իրողությունների համար, դառնալ այդ երևույթների առաջնորդն ու դրոշակակիրը: Պատմությունը, այդ թվում և հայ ժողովրդի պատմությունը, մասն անհատներ շատ է ունեցել, և անկախ նրանից, թե որ պատմական ժամանակաշրջանում են նրանք հանդես եկել, որպես վառ անհատականություն՝ նրանք միշտ էլ մնացել են սերունդների հիշողության մեջ, մնացել են պատմության էջերում:

Նման անհատականություն էր նաև Մխիթար Սեբաստացին (1676-1749): Նա բազմատաղանդ անձնավորություն էր, որի նպատակը վաղ տարիքից սկսած, ազգի հոգսերով տարվելն էր, նրա լուսավորությանը նվիրվելը, իսկ այդ լուսավորության չափանիշը եվրոպական չափանիշն էր, որ զգալիորեն առաջ էր անցել այլ տարածաշրջանների համեմատությամբ (այն այժմ էլ շատ ուղիղտեսքով մնում է որպես չափանիշ):

Երիտասարդ Սեբաստացին իր գիտելիքների պակասը լրացնում էր ինքնակրթությամբ: Արդեն 20 տարեկանում որոշում է կրոնական միաբանություն ստեղծել (այդ նույն տարիքում ձեռնադրվել էր քահանա): Դա շատ հանդուգն ու դժվար իրականացնելի ծրագիր էր իր մտահղացումներով ըմբոստ երիտասարդի համար: Մեծ դժվարություններ հաղթահարելով՝ 1700թ. նրան հաջողվում է 9 շաբաթանոցի իր հետ ստեղծել միաբանություն: Առավել մեծ դժվարություն էր միաբանության գործունեության համար վայրի ընտրությունը: Երկար դեզերումների ու պայքարի ընթացքում նրան հաջողվում է Վենետիկի Սենատից իշխանությունների թույլտվությամբ որպես սեփականություն ստանալ Սուրբ Ղազար փոքրիկ կղզին: Նա միաբանների թիվը հասցրել էր 16-ի և նրանց հետ միասին 1717թ. հաստատվում է կղզում: Կղզին Վենետիկից հեռու էր ընդամենը 3 կմ-ով, այն ի սկզբանե անայի էր: Սակայն դա չի խանգարել, որ դառնա 18-րդ դարի հայկական վերածննդի ամենակենսունակ կենտրոնը: Դա հայ մշակույթի՝ նախադեպը չունեցող կենտրոն էր: Կղզին ի սկզբանե ուներ 2 քառ. կմ-ից էլ պակաս տարածք: Մխիթար արքայապետը (Վատիկանը դեռևս 1712թ. էր նրան ճանաչել որպես միաբանության առաջնորդ և շնորհել արքայապետ կոչում) եռանդուն կցվեց կղզին բարեկարգելու գործին: Նախ ամուր պատմեղներ կառուցեց, հետո ցամաքից հող բերելով՝ քայլ առ քայլ ծովից տարածքներ էր գրավում: Շուտով այն հասցվեց շուրջ 6 քառ. կմ-ի: Ս. Սեբաստացին 1718-1740թթ. վիթխարի ջանքեր գործադրելով՝ նորոգեց վանքին կից եկեղեցին՝ նրան տալով հայկական ոճ, բոլոր հին կառույցները հարմարեցրեց վանքի պահանջներին, հիմնեց գրադարան, թանգարան, տպարան: Միաբանության գրադարանում կա ավելի քան 100 հազար գիրք հայերեն և այլ լեզուներով, շուրջ 5 հազար ձեռագիր գրքեր, թանգարանն ունի հռոմեական արվեստի հսկայական հավաքածու, նույնիսկ լավ պահպանված եգիպտական մումիա: Նապոլեոն Բոնապարտը 1804թ. Իտալիան ազա-

տեց ավստրիական լծից և Վենետիկը վերադարձրեց Իտալիային: Նա այցելեց հայոց կղզին և, ի նշան Մխիթարյան վանքի լուսավորչական գործունեության նկատմամբ տածած հարգանքի, հատուկ հրովարտակով հաստատեց կղզու և վանքի անկախությունն ու անձեռնմխելիությունը: Վանքի պատկերասրահում իտալական դասական նկարիչների շատ կտավներ կան, կան նաև հայ նկարիչների, այդ թվում՝ Բ. Այվազովսկու շատ նկարներ: 1925թ. Ե. Չարենցը եվրոպական շրջագայության ժամանակ լինում է Վենետիկում, հյուրընկալվում Իսահակյանին: Գեներալ այդ ժամանակ էլ հայ գրականության երկու հսկաներն այցելում են Մխիթարյան միաբանություն (Իսահակյանը՝ ոչ առաջին անգամ)՝ մոտիկից ծանոթանալու միաբանության հայագիտական գործունեությանը: Ուշագրավ է այն փաս-



տը, որ Իսահակյանի որդին՝ Վիգեն Իսահակյանը, նույնպես ներկա էր այդ այցելությանը և շատ ավելի մանրամասներ է նկարագրել իր «Հայր» հուշագրության մեջ: Վենետիկ այցելող յուրաքանչյուր հայ առիթը բաց չի թողնում Սուրբ Ղազար այցելելու, հայի համար սրբազան այս ուխտավայրին մոտիկից ծանոթանալու համար: Դեռ հեռվից աչք են շոյում լիբանանյան մայրիները, որոնք հեռավոր Լիբանանից բերել և տնկել էր արքայապետ Յուրյուզը 1860թ.:

«Մխիթարյան հայրերը, գրում է Վիգենը, շատ գոհ էին և ուրախ, որ միաժամանակ հյուրընկալեցին Իսահակյանին ու Չարենցին, նրանք զարգացած, ընթերցասեր մարդիկ էին, սիրում էին գրականություն, պոեզիա: Նրանց հրավիրեցին վանք: Մենք մտանք Ալիշանի խուցը: Դա փոքրիկ սենյակ էր, ուր տեղադրված էր մի երկաթյա մահճակալ և մի փոքրիկ գրասեղան: Այդ գրասեղանի վրա է հայ մշակույթի հսկան կերտել Չայաստամին նվիրված իր նշանավոր գործերը: Այգու խցի լուսամուտի տակ նա կառուցել է տվել մի փոքրիկ ավազան՝ Սևանա լճի մանրակերտվածքը. վերևից նայում ու երագում էր Չայաստամը, ուր երբեք չէր եղել... Մտանք լողի Բայրոնի խուցը: Այնտեղ պահվում էին նրա իրերը՝ գրիչը, գրքերը, հագուստները, այգում նրա ձեռքով տնկած ձիթենի կա: Քանի դեռ ծանոթանում էինք կղզու տեսարժան վայրերին, Չարենցը դիմեց հորս. «Մենք էլ չդառնա՞նք սուրբ հայրեր, այստեղ կունենանք տուն, տեղ, սնունդ, հարուստ գրադարան, լավ տպարան մեր տրամադրության տակ, խաղաղ կապրենք և մեր բանաստեղծությունները կհորինենք»: «Լավ միտք է, պատասխանեց հայրս, սուրբ հայրերը ինձ կընդունեն միության մեջ, բայց քեզ՝ որպես անաստվածի, չեն ընդունի»: Ներկաները զվարճացան այս երկխոսության վրա: Այնուհետև մեզ հրավիրեցին ճաշի: Սովորության համաձայն բոլորը խաչակնքեցին, բացի Չարենցից: Երևույթը բնավ չփոխեց արքայապետի աչքից: Տարակուսեց, բայց ոչինչ չասաց: Ճաշից հետո մեզ մոտեցավ Արսեն Ղազինյանը (հայ նշանավոր թարգմանիչ) և դիմեց այսպես. «Պարոն Չարենց, Դուք շատ պոեմներ, բանաստեղծություններ եք գրել, ընթերցողները կարող են հավանել կամ չհա-

վանել, բայց Ձեր «Ես իմ անուշ Չայաստամի» բանաստեղծությունը խոսում է բոլոր հայերի սրտի հետ՝ լինեն աշխարհական թե կրոնական, այս քերթվածը բավական է, որ մենք քեզ սիրենք»:

Աշխարհի բազմաթիվ նշանավոր մարդիկ են այցելել Սուրբ Ղազար, ծանոթացել միաբանության գործունեությանը՝ Բայրոնը, Գյուգոն, Տագորը, Շոպենը, Վագները, Վերդիին, Բրեյդը, Ստենդալը, Դիարիխը, Պետերմանը, թագավորներ, արքաներ, Գնդաստանի ռաջաներ և այլոք:

Բայրոնը լավատեղյակ է եղել հայ մշակույթին և պատմությանը: Այդ մասին մենք իմանում ենք նրա գործերի հրատարակիչ Զ. Մերտեյնի 1816-1821թթ. գրած նրա նամակներից: Նա Ս. Ղազար կղզի է այցելել 1816թ., ծանոթացել միաբանության գործիչների հետ: Գ. Ավգերյանից սովորել է հայերեն, նրա հետ հրատարակել «Քերականություն անգլիական և հայերեն» (1817), «Քերականություն հայերեն և անգլիական» (1819) դասագրքերը, օգնել Ավգերյանին «Բառարան անգլերեն և հայերեն» (1821) գրքի ստեղծման գործում: Ավգերյանի խնդրանքով Բայրոնը Չայ-անգլիական քերականական ձեռնարկի համար գրել է առաջաբան, որտեղ դրել է հայ ժողովրդին թուրք-պարսկական բռնակալությունից ազատագրելու խնդիրը: Սակայն քաղաքական նկատառումներով այն չի տպագրվել, հրատարակվել է միայն 1830թ.: Լոնդոնում լույս տեսած «Լորդ Բայրոնի կյանքը, նամակներն ու օրագրերը» գրքում: Բայրոնը հայերենից անգլերեն է թարգմանել երկու գլուխ Ս. Խորենացու «Չայոց պատմություն»-ից, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունից թարգմանել է այն մասերը, որոնք պակասել են անգլիական թարգմանության մեջ: Վերջին անգամ Բայրոնը այցելել է Ս. Ղազար կղզի 1823թ.:

Մխիթարյան միաբանությունը գործունեություն է ծավալել երկու՝ կրոնական-կաթոլիկական (Վատիկանի աջակցությունը ապահովելու համար) և հայագիտական-բանասիրական ուղղությամբ: Միաբանությունը հետազոտել, նախապատրաստել և հրատարակել է հայագիտական գրականություն (հայ պատմիչների երկերի բնագրեր, գրաբարի քերականությանը նվիրված ուսումնասիրություններ, դասագրքեր): Չայագիտական գործունեության մեջ նշանակալից էր Ս. Սեբաստացու «Բառգիրք Չայկազյան լեզվի» (1-ին և 2-րդ հատորներ) բացատրական բառարանի հրատարակումը (1749-1769): 18-րդ դարի երկրորդ կեսին միաբանությունում աշխույժ գիտական աշխատանք ծավալեցին մշակութային և գիտական առաջնակարգ գործիչներ Գ. Ավետիսյանը, Ս. Չամչյանը, Ս. Ավգերյանը, Գ. Ավգերյանը, Ե. Թովմասյանը, Դ. Ալիշանը և ուրիշներ: Այդ ժամանակահատվածում բնագիտական ճշգրտումներով, առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվեցին Գ.Նարեկացու «Մատենագրություն»-ը, Փ. Բուզանդի «Պատմություն հայոց», Ս. Գերացու «Ջերմաց մխիթարություն», Դ. Անհաղթի, Եղիշեի, Ս. Խորենացու «Մատենագրություններ»-ը, ինչպես նաև համաշխարհային և հայ դասականների այլ գործեր: Մխիթարյանները հանդես եկան նաև ինքնուրույն հայագիտական, պատմաբանասիրական, աշխարհագրական, բառարանագիտական և այլ բնույթի աշխատություններով: Մխիթարյան միաբանությունը ծավալեց նաև ուսումնակրթական լայն գործունեություն՝ փոխարինողներ աճեցնելու նպատակով: Ս. Սեբաստացին դեռևս 1732թ. Սուրբ Ղազարում հիմնադրեց դպրոց «Վար-

ժարան» անունով: 1833թ. Պաղուայում (Գյուսիսային Իտալիա) սկսեց գործել Սուրադյան, 1836թ. Վենետիկում՝ Ռաֆայելյան վարժարանները, որոնք 1873թ. միավորվեցին՝ ստանալով Սուրադ-Ռաֆայելյան վարժարան անունը: 1846թ. Փարիզում բացվեց ևս մեկ դպրոց և ստացավ Փարիզի Սուրադյան վարժարան անունը: Այդ վարժարանները գործում են առայսօր: Վենետիկի Մխիթարյանները 1843-ին հիմնադրեցին «Բազմավեպ» ամսագիրը, որը 19-րդ դարի 60-ական թվականներից ընդունեց հայագիտական-բանասիրական բնույթ: Այն հրատարակվում է առայսօր (տվյալները վերցված են 1981թ. հրատարակված գրքից):

Մխիթարյան միաբանության աշխատանքներին ակտիվ մասնակցություն է ունեցել (1830-1856) Գաբրիել Այվազովսկին (Յովհաննես Այվազովսկու եղբայրը): Նա կրթություն է ստացել Վենետիկում: Դասավանդել է Վենետիկի Ռաֆայելյան, Փարիզի Սուրադյան (եղել է տնօրենը) վարժարաններում, մասնակցել Փարիզի Չայկազյան վարժարանի հիմնադրմանը: Եղել է «Բազմավեպ»-ի առաջին խմբագիրը, «Մասսյաց աղավնի»-ի խմբագիր-հրատարակիչը: Եղել է հմուտ մանկավարժ, պատմաբան, թարգմանիչ, տիրապետել է 12 լեզուների: Գեղինակել է դասագրքեր՝ «Ուղղագրություն լեզվիս հայոց», «Նախակրթարան հայերեն լեզվի», «Ընթերցարան լեզվին ռուսաց», գրել է պատմական աշխատություններ. «Չամառոտ պատմություն ռուսաց», «Պատմություն Օսմանյան պետության» աշխատությունները, իտալերեն է թարգմանել Ս. Խորենացու, Ագաթանգեղոսի երկերը:

1772թ. Ս. Մելգոնյանի արքայապետության ժամանակ միաբանության անդամների միջև անհամաձայնություն ծագեց կանոնադրության փոփոխման կապակցությամբ: Դրա հետևանքը եղավ այն, որ միաբանների մի խումբ Ա. Բաբիկյանի գլխավորությամբ թողնելով Վենետիկը՝ 1773թ. հաստատվեց Տրիեստում, իսկ 1881թ.՝ Վիեննայում: Նույն թվականի հունիսի 8-ին ավստրիական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց միաբանության գոյությունը: Կարճ ժամանակ անց նրանք կրկնապատկեցին միաբանների թիվը, դպրոցներ բացեցին Պոլսում, Իզմիրում, Տրիեստում և Եվրոպայի ու Մերձավոր Արևելքի հայաշատ վայրերում: Վիեննայի միաբանները հրատարակեցին «Եվրոպայ» շաբաթաթերթը, 1887-ից՝ «Չամառոտ ամսօրյա» ամսագիրը: Միաբանության՝ 20-րդ դարի վերջին արժեքավոր աշխատություններից է «Ազգային մատենադարան» մատենաշարի հրատարակումը: Նույն դարի 70-ական թվականներին Մխիթարյան միաբանության հրատարակած գիտական աշխատություններից ուշագրավ էին Լ. Չեքիյանի «Չայ թատրոնի սկզբնաբայերը» և հայ վերածնունդի շարժումը, Ս. Ճանաշյանի «Պետրոս Դուրյան» դար մը ետք», Պ. Անանյանի «Սեբեոսի պատմության գրքի մասին քանի մը լուսաբանումներ» և այլ աշխատություններ: Չմայած առանձնանալուն, Վիեննայի միաբանները մշակութային գործունեությամբ մնացել են Մխիթարյան միաբանության անբաժան մասը, իսկ 1900թ. սերտորեն համագործակցում են Վենետիկի Մխիթարյանների հետ: Միաբանության տնօրինության տակ այժմ էլ գործում են վարժարաններ, տարբեր տիպի դպրոցներ Ֆրանսիայում, Իտալիայում, Բուենոս Այրեսում, Հալեպում, Լիբանանում, լիցեյ՝ Պոլսում:

Չայրենիքից հեռու, սակայն հանուն մայր հայրենիքի նրանք շարունակում են հայագիտական, հայապահպանական լայն աշխատանք ծավալել:

Լեւոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիշճյան

ԱՁԳԻ ՄԵՆԵՐԸ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՒՇԵՐԸ ԴԵՎՈՆՂ ԱԼԻՃԱՆԻ ՄԱՍԻՆ



Ապրիլ ամսի սկզբներին, 1901 թվին, Վիեննայից մեկնում են Վենետիկ՝ թե՛ Մխիթարյանների վանքի հայագիտությանը հարուստ գրադարանից օգտվելու և թե՛ Իտալիան հնար եղածի չափ տեսնելու:

Ուշ երեկոյան հասնում են Վենետիկ: Առավոտ վաղ ոտքի վրա են. ուզում են ժամ առաջ տեսնել Սուրբ Ղազար կղզին՝ Մխիթարյանների վանքը: Հետաքրքրության առաջին գծի վրա սա է կանգնած, պատանի հասակիցս երազել են տեսնել Վենետիկը, բայց մանավանդ՝ Ս. Ղազարը:

Նետում են ինձ առաջին պատահած գոնդոլի վրա: Մի արևակառ օր է. սև գոնդոլը սև կարապի պես ներդաշնակ սահում է Մեծ կանաչի կանաչ ջրերի վրայով: Սա կախարհական քաղաքի ամենամեծ, լայն և երկայն ջրային պողոտան է, որ կիսում է Վենետիկը երկու մասի: Նրա աջ ու ձախ կողմերում շարքով կանգնած են հրաշագեղ պալատներն ու ապարանքները՝ երփներանգ մարմարիցով, կառուցված վենետիկյան չքնաղ ոճով: Կարծես հեքիաթների միջով են գնում. այնքան անիրական, այնքան երևակայական են թվում այս բոլորը, սակայն ես հայացքս հառել եմ Լազուրայի հեռուները, որոնում են Ս. Ղազար կղզին: Գոնդոլավարը, ճանապարհի ընթացքին հանդիպող կղզիների անունները տալով, առաջանում է և, ահա, ցույց է տալիս ոչ շատ հեռվում՝ Ս. Ղազարը...

Գանդաղ է սահում գոնդոլը: Ես անհամբեր եմ, շտապեցնում են գոնդոլավարին: Մոտենում ենք կղզուն, անհագուրդ նայում են կանաչ ճոճիների միջից երևացող կարմիր շենքերին. «Սուրբ Ղազարն է սա», - ասում են ինձ և կրկնում:

- Ի՞նչ պատկանելի անուններ հնչում են ականջիս՝ Մխիթար Սեբաստացի, Ազոնց, Չամչյան, Ինճիճյան, Բագրատունի... և Ալիշան, որին բախտ կունենամ այսօր իսկ տեսնելու:

Ինչքան մեծ երախտիք ունի Սուրբ Ղազարի միաբանությունը հայ գրականության, հայագիտության հանդեպ: Ի՞նչ հոյակապ գործեր՝ առաջին աշխարհաբար հայ գրականություն, Հայկազյան բառարան, Հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն՝ սովորական հատորներով, հին ծեռագիր մատյանների (մատենագրությունների) հրատարակություններ, կլասիկների թարգմանություններ: Գոնդոլը կանգ է առնում: Սրտատրոփ ոտք են դնում այս պատմական, թանկարժեք հողի վրա:

Ինձ դիմավորում է մի առողջ, համակրելի երիտասարդ վարդապետ: Եսայի Տայեցի՝ «Անվավեր ավետարանների» հրատարակիչը: Միաբաններից մեկը ամեն օր հերթով, ընդունում է այցելողներին և ցույց տալիս Ս. Ղազարի տեսարժան տեղերը՝ տաճար, մատենադարան, թանգարան, տպարան, պարտեզ և այլն: Վանքը լավ համբավ ունի Եվրոպայում, և Վենետիկի այցելուները չեն թերաւում Ս. Ղազար էլ այցելելու:

Վանքը շրջելուց հետո Եսայի Տայեցին առաջնորդեց ինձ հյուրասենյակ, ուր ծանոթացա մի քանի երիտասարդ կարգապետների հետ, արդեն անուն ունեցողներ՝ Վարդան Հացունի, Էփրիկյան, Սիմեոն Երեմյան: Հյուրասիրեցին սուրճով և անուշեղեններով: Նրանք շատ հետաքրքրվում էին Կովկասի հայերի կացությամբ, հարցնում էին դպրոցներ

րի մասին, գրականության և էջմիածնի մատենադարանի մասին, Անիի և այլ հնությունների պեղումների մասին:

Այս գրույցից հետո փափագ եմ հայտնում տեսնել հայր Առող Ալիշանին: Այս անգամ Սիմեոն Երեմյանն առաջնորդում է ինձ մեծամուն բանաստեղծի և գիտնականի մոտ: Ինչքան, ինչքան ուրախ եմ, որ պիտի տեսնեմ ամբողջ հայության սիրելի Ալիշանին: 90-ական թվականների մեր սերունդի համար նա ամենահմայիչ անունն էր. նրա՝ Նահապետի սքանչելի բանաստեղծությունները՝ «Հրազդան», «Պլպուլև Ավարայրի», «Հայոց աշխարհիկ, գարունը է եկել...», մենք անզգի գիտեինք, մեր դասագրքերի գարդն էին նրանք, ոգևորված արտասանում էինք հանդեսներում:

Նրա գրքերին պատկառանքով էինք մոտենում, որոնք մեզ համար բացարձակ հեղինակություն էին: Նրա աշխարհագրական երկերի վրա («Այրարատ», «Շիրակ», «Սիսական») սովորում էինք Հայաստանը և, նրա պես, չտեսած հայրենիքի նվիրական վայրերը, սիրում էինք մի անբացատրելի սիրով: Մտնում ենք հայր Ալիշանի խուցը, մի ոչ մեծ սենյակ՝ ծովահայաց լուսամուտով: Գրասեղանին հակած է մի ալեղ՝ փոքրամարմին, անարյուն, դալուկ մի սուրբ... և գրում է: Մի վայրկյան դիտում եմ անշուք խուցը... Ամեն կողմ գիրք՝ աթոռների վրա, սեղանի վրա. մի պարզ անկողին՝ սնարին Աստվածամոր պատկերը. մի փոքր սեղանի վրա մի գրաֆիկակ՝ ջրով լի, կողքին մի բաժակ: Եվ ուրիշ ոչինչ:

Ալիշանը բարձրացնում է գլուխը, խոշորացույց ակնոցների միջով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աչքեր:

Հուզմունքով համբուրում են ջրուտ ձեռքը, որ կերտել է այն պատկանելի հատորները:

- Ապրիք, գորանաք, ուրկե՞ կուզաք, - հարցնում է Ալիշանը տակավին առույգ ձայնով:

Հայր Սիմոնը պատասխանում է իմ փոխաբերն.

- Ուսանող է Վիեննայի, կովկասահայ է: Ես հայտնում եմ իմ մեծ ուրախությունը, որ բախտ ունեցա տեսնելու մեր բոլորիս պաշտելի Նահապետին և այսպես առույգ, առողջ...

Ալիշանը ժպտում է մեղմակի, ապա հարցնում է՝ ի՞նչ են ուսանում, ինչքան պիտի մնամ Վենետիկ:

Ես կրնամ ձեզի սուրճ հրամցնել. վարդապետ, գնա՛ մեզի համար սուրճ ապսպրե:

Ես շնորհակալ եմ, հրաժարվում եմ սուրճից:

- Սակայն դուն գնա՛, - ասում է Ալիշանը:

- Կովկասի հայերը սուրճ չեն սիրեր. դուք թեյ կսիրեք:

Ասկե շատ տարիներ առաջ պարոն Սիմասարովը, հայտնի ազգային մը, գիտե՞ք զինքը:

- «Քնար Հայկական»-ի խմբագիրը թերևա:

- Ապրես, գիտուն մանչ ես. այո՛, ան Պետերբուրգեն այցի էր եկած վանքը ու ինձի սամվար մը նվեր բերած էր. ըսավ ինձի, վարդապետ, թեյ խմել սովորե՛, աշխատանքի ժամանակ արդեն է: Չգործածեցի, հոն կմնա վանքի մեկ անկյունին մեջ:

Տպարանում գնել էի Ալիշանի մեծ լուսանկարը, հիմա խնդրում եմ, որ բարեհաճի իր անունը գրել նկարի ներքո, որ շատ թանկագին հիշատակ կլինի ինձ համար:

Ալիշանը ամուր ձեռքով, դանդաղ ստորագրում է իր ներշնչող անունը:

Ավելի քան կես դար այս խուցում կան մնան խուցում, իր ողջ երիտասարդությունը, կքել է նա սեղանին, որի վրայով անցել են անթիվ գրքեր հին ու նոր լեզուներով, հայացքը Արդիականի ոսկի ալիքներին և ակնաջը մշտամրմունջ ջրերին, և ժողովրդից հեռու, հայրենիքից հեռու, բայց հոգով մոտ, սրտով մոտ, երգել է իր «Նվագ»-ները (հինգ հատոր՝ I հ.

«Մանկունի», II հ. «Մաղթունի» և «Բունի», III հ. «Հայրունի», IV հ. «Տիրունի» և V հ. «Տիրունի»)՝ երազելով հայրենիք, տիեզերք, անհունություն, հավերժություն...

Այս խուցում ներշնչված Մովսես Խորենացու և Անանիա Շիրակացու ներկայությամբ, անխոջ համբերանքով և ավյունով պրպտել է ողջ մատենագրությունը՝ պատմական և աշխարհագրական, արդի հայ գրականությունն ու մամուլը, հավաքել է անթիվ տեղեկություններ Հայաստանի ամեն մի վայրի մասին՝ հին և նոր:

Ալիշանը գիտնական աշխարհագետ էր, անդամ Եվրոպական աշխարհագրական ընկերությունների, հմուտ ու շատ կարողացած էր. խորապես ծանոթ Եվրոպական գիտնականների գործերին՝ Ա. Հունթերի, Կ. Ռիտերի, էլ. Ռեկլյուի, այլև հին ու նոր ուղեգրությունների, սակայն, նա գրքերից կոմպիլացիա կազմող չէր՝ չոր ու ցամաք, այլ, առանց նյութական աչքերով տեսնելու Հայաստանը, հոգով տեսավ նա դարերի մշուշների մեջ թաղված Հայաստանը, տեսավ տարածություններով հեռու վայրեր, այցելեց Հայաստանի ամեն մի կետը, սիրեց, ապրեց ամեն մի հողի կտորը, շնչավորեց ավերակները, զգվեց, հիացավ նրանցով: Իր հատորների և մեր հոգիների մեջ վերակերտեց նա Հայաստան աշխարհը և պատեց մի վիպական, բանաստեղծական մթնոլորտով՝ գեղեցիկ, հրապուրիչ, առասպելական, բայց և իրական:

Հայաստանը ո՛չ ոք այնպես չգիտե, ինչպես նա, ո՛չ ոք այնքան չի սիրել, որքան նա՝ այս մեծ հայրենասերը: Իրականությունը նրա գրչի տակ երազ է դարձել և երազը՝ իրականություն:

Լուսանկարը վերցնում են խորին շնորհակալությամբ, նորից համբուրում են բազմաշխատ ձեռքը և խուցից դուրս գալիս:

Տակավին Վենետիկ էի, երբ Պետերբուրգի հայ ուսանողների մի խմբակից նամակ ստացա: Գրում էին, որ ուսանողների այդ խմբակը ձեռնարկել է ժամանակակից հայ անվանի մարդկանց կենսագրությունը գրել ժողովրդական լայն խավերի համար: Դիմում էին ինձ, որ անմիջապես Ալիշանից կենսագրական տեղեկություններ, փաստեր, դրվագներ խնդրեի, պատմեր ինձ և նույնպես միաբաններից հավաքեի նյութեր, նաև հարցնեի նրա կարծիքը թրքահայերի հարցի մասին (Հայկական հարց):

Այս նամակով զինված՝ գնացի Ալիշանի մոտ: Ալիշանը հեզմանքով ասաց.

- Այդ ի՞նչ ծանր քար են դրած քո մեջքին: Վախեցա՞ր. գրելիք բան մը չկա: Ես կենսագրություն չունիմ:

Ասաց, որ իրեն 8-9 տարեկան հասակում Կ.Պոլսից բերել են Ս. Ղազար, նվիրել են վանքին: Սկսել է աշակերտել միաբանության դպրանոցում, ավարտել է շատ մտաղով տարիներ, ուսանող է եղել և մի քանի տարի էլ Փարիզի Մուրադյան հայ վարժարանում դասատու և վարիչ է եղել:

- Եվ քանի մը գրքեր են գրած: Ուրիշ ալ ըսելիք չունիմ: Գրքեզիրք՝ ատ է եղած իմ ճամփան: Ուրիշ տեղեր չեմ գացած:

Հետո ասաց, որ աշխարհականները կենսագրական ունին, կարող են ունենալ: Գործեր կըռնեն, կընկնեն, կելնեն: Ծանփորդություններ կկատարեն, կկռվին, դատեր կվարեն, կամուսնանան, երեխաներ կունենան և այլն, և այլն:

Ինչ վերաբերում է Հայկական հարցին, Ալիշանն ասաց հետևյալը, որ ես շարադրում եմ արևելահայ բարբառով.

- Իհարկե, հայ ժողովուրդը լավ գիտեր, որ իր սեփական ուժերով չպիտի կարողանար թոթափել թուրքական լուծը, ինչպես առանց Եվրոպայի օգնության չպիտի կարողանային ազատվել ո՛չ Հունաստանը և ո՛չ Բուլղարիան: Հայ ժողովուրդն էլ, նրանց հետևելով, հույսը դրել էր քրիստոնյա Եվրոպայի օգնության վրա, մեծ, քաղաքակիրթ պետությունների մարդասիրության վրա: Այստեղից էլ հայ ժողովրդի մեծագույն և բազմաղետ սխալը:

Կոտորածների ժամանակ Թերզյան հայ կարդիմալը գնում է Հռոմ, ընկնում է Սրբազան պապի ոտները, աղերսում է, որ պապը դիմում անե քրիստոնյա մեծ պետություններին՝ Անգլիային, Ռուսիային, Ֆրանսիային, Գերմանիային, որ ջարդարար թուրքի ձեռքը բռնեն: Սրբազան պապն ասում է. «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»:

Եվրոպական պետությունները ոչ միայն չօգնեցին և չպաշտպանեցին իրենց հուսացող հայ ժողովրդին, այլև պատեհ առիթ գտան շահագործելու հայկական արյունը: Հայ ժողովրդին վաճառեցին թուրք դահիճին, փոխարենը ստացան տնտեսական-առևտրական մենաշնորհներ: Եվրոպացու «բարոյականը ավերված է», բարոյապես սնանկացած է նա. նախնական մարդու բնական մարդասիրությունն էլ չունի անգամ: Նա ստախտ է, շահամոլ է և եսական:

Պետք է վերջ տալ հայերի մեջ եղած հեղափոխական ընկերությունների գործունեությանը, պետք չէ գրգռել թուրքերի մոնոլիական արյունը: Պետք է ընդմիջտ երես շրջել այդ փչացած Եվրոպայից և գարշանքով երես շրջել:

Թրքահայերի պատրիարք Օրմանյանը քաղաքագետ մարդ է. բարեկամական հարաբերություններ է մշակում նա սուլթանի հետ: Պետք է աջակցել նրան: Մի բառով՝ պետք է համակերպել, ուրիշ ելք չեն տեսնում հայերի համար: Հետո ավելացրեց՝- Ռուսահայերի վիճակը համեմատաբար գեշ չէ. կոտորած, հափշտակություն չկա, բայց այն պատճառով, որ ազգային դպրոցներ չունեն, հայկական դաստիարակություն չկա, լեզու և մշակույթ ճնշման տակ են, այս դրությունը ցանկալի արդյունք չի տալու: Ռուս պետությունը իր բերանով է ասում այս: Մի երկու տարի առաջ վանք է այցելում ռուսական եկեղեցու սինոդի մեծը (երևի՝ Պրեդրոսուցև, սինոդի օբեր-պրոկուրորը)՝ իր քարտուղարի հետ: Գրեթե բոլոր միաբանները նրա պատվի համար ոտի վրա են և քայլում են նրա հետ: Նա տեսնում է գեղեցիկ տաճարը, ծոխ գրադարան-մատենադարանը, տպարանը, թանգարանը...

Երբ նստում են հյուրասենյակում մի բաժակ սուրճ խմելու, այդ ռուս մեծ պաշտոնյան, շնորհակալություններ հայտնելով միաբաններին, ասում է.

- Հայ ժողովուրդը շա՛տ ավելի ահեղ ժամանակներ ու բռնություններ է տեսել, նվազել է թվով, բայց մնացել է ոգով կայուն և անվթար: Մեր հույսը Աստծու վրա է, մեր ժողովրդի տոկունության և պատմության անիմանալի ընթացքի վրա:

Բոլոր միաբանները անխոս հեռանում են դահլիճից, իսկ մեծամուն պաշտոնյան, քարտուղարի հետ միայնակ, գնում է նավամատույց:

Ալիշանն ավարտեց խոսքը, ծանր շնչեց, լռեց մի պահ, ապա ձեռքը մեկնելով ինձ, ասաց.

- Բարևներ խոսեցեք Պետերբուրգի ձեր ազնիվ ընկերներին, նաև իմ շնորհակալությունը՝ իմ հանդեպ ունեցած նրանց հարգանքի համար: Շրջահայաց եղեք, սիրեցեք հայոց լեզուն, Հայաստան աշխարհը և սիրեցեք միմյանց:

Ես խոնարհեցի գլուխս և դուրս ելա նվիրական խուցից:

Երբ մեկնում էի Վենետիկից, գնացի Ալիշանի մոտ՝ վերջին անգամ տեսնելու և հրաժեշտ անելու:

Օրինեց ինձ, բարիքներ մաղթեց և ողջույն ուղարկեց հիքմյան Հայրիկին:

- Ինձմեն հարյուր օրով մեծ է ան,- ասաց Ալիշանը,- բայց կըռնեմ, որ շատ առույգ է, ձի կնստի, հարկավ այդպես է. ան Մասիսի հովին տակ կքնանա, Արաքսի ջուրը կխմե, Հայաստանի հացը կուտե, անոր հողի ուժը կառնե...

Դեկտեմբերի 30, 1948, Երևան Ավետիք Իսահակյան, «Իմ հուշերից», Երկերի ժողովածու, հատոր V

ԱՊՐԵԼ ԵՎ ԱՊՐԵՑՆԵԼ

ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՅՆ ԱՐՑԱԽՈՒՄ



վրա: Հնարավոր է, որ հայրենասիրական գաղափարներին հավակնող, ազգային ու ընտանեկան արժեքները բարձր դասող մարզիկը կյանքը կապի այնպիսի մարդու հետ, որը չի կիսում նման գաղափարներ:

Սուրբ Սարգսի եւ Տեառնդառաջի՝ սիրո եւ երիտասարդների օրհնության փետրվարյան տոների խորհրդին ընդառաջ անդրադարձանք արցախյան գեղեցիկ ընտանիքի եւ ստացանք վերոնշյալ հարցերի պատասխանները:

Արցախյան այս երիտասարդ ընտանիքի գլուխը մարզական էջի հետեւողներին քաջածանոթ՝ Արցախի ավանդական կարատե-դոյի ֆեդերացիայի մարզիչ, սեւ գոտի երրորդ դաս, ավանդական կարատե-դոյի ՀՀ բազմակի չեմպիոն, Եվրոպայի չեմպիոն, աշխարհի գավաթի մրցանակակիր, աշխարհի առաջնության փոխչեմպիոն, Տիգրան ԳԵՎՈՐԳՅԱՆ է:

Ծնվել է 1992թ. հոկտեմբերի 21-ին: Ապրել ու մեծացել է Ստեփանակերտում: Լինելով կարատեի ճանաչված մարզիչ սեմեսե Արամ Գեւորգյանի որդին՝ մանուկ հասակից ինքն էլ սեր եւ հետաքրքրություն է ցուցաբերել կարատե մարտարվեստի նկատմամբ: Հաջողություն ունենալով մարտարվեստի ոլորտում՝ շարունակել է պարապել ու բարձունքների հասնել: Մասնագիտական կրթություն ձեռք բերելով՝ նաեւ մարզչական գործունեությամբ է սկսել զբաղվել՝ մատաղ սերնդի մեջ սերմանելով հայրենասիրական գաղափարներ, մարտարվեստի՝ առողջ մարմին ու ամուր ոգի ունենալու սկզբունքներ:

Կինը Էլինա Գեւորգյանն է: Ծնվել է 1995թ. հունիսի 24-ին Ստեփանակերտում: Մասնագիտությամբ բանասեր է, ռուսաց լեզվի եւ գրականության ուսուցիչ: Աշխատում է գեղեցկության սրահում՝ որպես դիմահարդար-էսթետ:

Մեծացնում ու դաստիարակում են երկու զավակների: Առաջնեկը Եմիլիան է, որը «Լու-

սարար»-ին ոչ պակաս ծանոթ է մանուկ հասակում մարզիչ-հոր կողքին կարատեի պարապմունքների հաճախելով ու զարմանալի ճկունություն ունենալով: Դեմիսը մի քանի ամսական է: Շատերի նման նրան էլ բախտ է ընկել վաղ մանկությունն անցկացնել շրջափակման մեջ:

2022թ. դեկտեմբերին Արցախյան Մայր Հայաստանին կապող կյանքի միակ ճանապարհը Արթուրյանի կողմից փակելուց եւ Արցախը փաստացի շրջափակման մեջ հայտնվելուց հետո առաջացած դժվարություններն արցախյան ընտանիքներին համար հարթահարե-լի են, եթե ընտանիքում կա սեր, փոխըմբռնում, գիտակցում ու պայքարի ոգի:

Հատկանշական է, որ Տիգրանն ու Էլինան հանդիպել են «Առաջ, Արցախ» հասարակական կազմակերպության կողմից 2013 թվականին կազմակերպված հայրենասիրական ճամբարում, որը Ծնակահող գյուղում էր: Երկուսն էլ ակտիվ, հետաքրքրասեր, հայրենասիրությամբ օժտված երիտասարդներ էին, իսկ իման՝ նույն հատկանիշների տեր ամուսիններ:

Որպես հասարակական կազմակերպության անդամներ՝ Տիգրանն ու Էլինան մասնակցեցին 7 օր տևողությամբ կազմակերպված ճամբարին: Դա նրանց կյանքում առաջին գիշերակացով ճամբարն էր: Երկուսին էլ զբաղել էին և՛ կազմակերպության հայրենասեր գաղափարները, և՛ կազմակերպված ճամբարի թեման՝ հայրենասիրությունը: Ընդ որում, ներառված էր նաեւ քայլարշավ դեպի Կաչաղակաբերդ: Նրանց համար մեծ քայլ էր Կաչաղակաբերդ բարձրանալը բոլոր անդամների մասնակցությամբ: Այդպես ծանոթացան Տիգրանն ու Էլինան ու սկսեցին շփվել: Տիգրանը հավանել էր Էլինայի յուրատիպ գեղեցկությունը, սիրուն աչքերը եւ հաճելի զրույցը: Էլինան հավանել էր Տիգրանի գրագետ, հավասարակշռված լինելը, եւ իհարկե, նրա մարզական կեցվածքն ու մարտարվեստի

մարզիկ լինելը: Երեք տարի ընկերություն անելուց հետո նրանք միմյանց մեջ գտան իրենց ընտանիքի ստեղծման ապագան:

Ընտանիքի բարձրագույն արժեքը միմյանց նկատմամբ սեր, վստահություն, ներդաժանություն ունենալն է, որոնց վրա էլ հիմնված է նրանց ամուր ընտանիքը. այդպես են մեկնաբանում Տիգրանն ու Էլինան:

Տիգրանը կնոջ մեջ արժեւորում է ընտանիքի նկատմամբ հոգատարությունը, որի մեջ ընդգրկված են կանացի բոլոր դրական հատկանիշները:

Էլինան ամուսնու մեջ արժեւորում է ընտանիքի հանդեպ նվիրվածությունն ու հոգատարությունը:

Ինչպիսի՞ն պետք է լինի Արցախյան ընտանիքը: Երկուսի կողմից լսում ենք. «Ցանկացած արցախյան ընտանիք պետք է պահպանի հայի ընտանեկան ավանդույթները, որոնց հիմքում մեր արժեքներն են ու պատմությունը»:

Դժվարանում են պատասխանել, թե ինչպիսին են տեսնում Արցախի ապագան, այնուամենայնիվ, տեսլականը հետեւյալն է. «Մեր ապագան պատկերացում ենք միայն Արցախում: Հաշվի առնելով նաեւ այն, որ մեր նախնիները դարերով պայքարել են այս հողերի պահպանության համար, մենք իրավունք չունենք ուրիշ տեղ ապրելու: Արցախի ապագան պատկերացում ենք անկախ, բայց Մայր Հայաստանի հետ, առանց թշնամու հետ բարեկամանալու: Արցախը փոքր է, բայց մեզ պիտի ճանաչի ամբողջ աշխարհը մեր մշակույթով, մարզաշխարհով, արցախյան այն բարիքներով, որոնց կարիքն ունեն շատ պետություններ»: Սրան հաջորդում է տոների առթիվ եւ առհասարակ արցախյան ընտանիքներին տրվող սրտաբուխ մաղթանքը. «Արցախյան ընտանիքներին մաղթում ենք ամուր կամք, հավատ ու համբերություն, որպեսզի միասին հաղթահարենք մեր շուրջ ստեղծված դժվարությունները»:

ԴԻՏԱՐԺԱՆ, ԳՐԱՎԻՉ ԵՎ ՀՆՈՐ.

Արցախում լայն տարածում ու մասսայականացում ունի MMA կամ խառը մենամարտերի մարզածելը: Արցախի MMA-ի ֆեդերացիայի նախագահ եւ մարզիչ Գարեգին Աղաբալյանի ջանքերով լայն թափ է ստանում մարզածելի զարգացումը: Ավելանում է այս մարզածելով պարապող մարզիկների թիվը, համալրվում է մարզչական անձնակազմը, հայազգի պրոֆեսիոնալ աշխարհահռչակ մարզիկների մասնակցությամբ վարպետաց դասեր են անցկացվում Արցախում, մարզածելով կազմակերպվում են դիտարժան ներկայացումներ, մարզիկները մրցույթների են մասնակցում թե՛ Արցախում, թե՛ ՀՀ-ում, թե՛ արտերկրում:

Ի՞նչ մարզածել է MMA-ն: Պատկերացրեք՝ մի սենյակում հավաքվել են բռնցքամարտիկներ, կարատեիստներ, ըմբշամարտիկներ, ծյուղդիստներ, մուայթայի, ջիու-ջիուցի եւ քիքթոքսինգի մենամարտիկներ: Լարված իրավիճակ է. այդ ամուր տղաներն ու աղջիկները կցանկանային մենամարտի միջոցով պարզել, թե ով է իրենցից ուժեղագույնը: Բայց դա անելու համար նրանք պետք է կատարեն փորձի փոխանակում միմյանց միջև: Այլ կերպ չի ստացվի: Դա MMA-ի սենյակ է. մենամարտերի ինքնուրույն ուղղություն, որը ներառում է բազմաթիվ մարտական ոճեր ու տեխնիկաներ:

MMA-ն ժամանակակից խառը մենամարտերն են, որոնցում կա տարբեր մարտական արվեստներից վերցված լավագույնը: Հասկանալի է նշանակում է՝ «mixed martial arts», որն անգլերենից թարգմանաբար նշանակում է՝ խառը մարտարվեստներ:

MMA-ի մարզիկներն ունիվերսալ մարտիկներ են: Նրանք կարող են իրար

խփել ձեռքերով, ինչպես բռնցքամարտում, հարվածել ոտքերով, ինչպես՝ կարատեում եւ մուայթայում, պայքարել ու նետել մրցակցին, ինչպես սամբոյում կամ ազատ ոճի ըմբշամարտում:

MMA-ն ամենադիտարժան է անկանխատեսելի մարզածելից մեկն է:

Մարտերն ընթանում են լրիվ կոնտակտով: Մրցակիցները կարող են միմյանց հարվածել ձեռքերով ու ոտքերով, ինչպես նաեւ պայքարել կանգնած դիրքում կամ պարտերում: Հաջողակ մարտիկ դառնալու համար մարզիկներն ստիպված են լինում իրարից սովորել տարբեր մարտաոճեր: «Հարվածային մարտ»-ում օգնում են բռնցքամարտը, կարատեն ու քիքթոքսինգը: Պայքարի համար մարտիկները գերադասում են օգտագործել ազատ ոճի ըմբշամարտի կամ հունահռոմեական ըմբշամարտի, ինչպես նաեւ՝ ծյուղդի ու սամբոյի հնարքներ:

Ավելի լավ պատկերացնելու համար, թե ինչ մարզածելի մասին է խոսքը, պետք է ծանոթանալ դրա ծագման պատմության հետ:

Կան մի քանի իրադարձություններ, որոնք ազդեցություն են ունեցել ժամանակակից խառը մենամարտերի ծագման ու կայացման հարցում: Պատմականորեն ուղղությունները տարբաժանված էին, սակայն միջոց ընդհանուրը մնում էր նույնը՝ մարտաոճերի ու հնարքների համադրում: Միայն 20-րդ դարի վերջին առաջացավ միավորված ուղղությունը, որն այժմ ամենատարածվածն ու գրավիչ մարզածելից է աշխարհում: Արցախցի երիտասարդների համար այս մարզածելի գրավիչ լինելը զարմանալի չէ, քանի որ արցախցու մարտական ոգին եւ բազմակողմանի զարգացած լինելը հենց այն հատկություններն են, որոնք



առաջնային են խառը մենամարտերում: Հին հունական պանկրատիոն. սրանք են առաջին հայտնի խառը մենամարտերը: Առաջին խառը մենամարտերի մրցույթներն անց են կացվել Օլիմպիական խաղերի ժամանակ մ.թ.ա. 700-500 թվականներին: Դրանք կոչվել են պանկրատիոն, որ նշանակում է՝ ըմբշամարտի եւ բռնուճքով մարտի խառնուրդ:

Գլադիատորների միջև մարտերի դարաշրջանում պանկրատիոնը նահանջեց: Այն չէր կարող համեմատվել դրա հետ իր դաժանությամբ ու դիտարժանությամբ:

19-րդ դարի վերջին մի քանի ինքնուրույն մարտական ուղղություններ ծնվեցին Եվրոպայում: Դրանց ներկայացուցիչները սկսեցին մրցել մեկը մյուսի հետ: Այդ ժամանակ ճորարարություն էր, որ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկը մարտի է կանչում մենամարտիկի:

MMA-ի զարգացման գործում մեծ ավանդ են ներդրել Գրեյսի եղբայրներն ու նրանց ուսուցիչ ճապոնացի վարպետ Միցույո Մանդան: 20-րդ դարի սկզբին վարպետ գնաց Բրազիլիա, ծանոթացավ Գաստան Գրեյսի հետ ու նրա երեխաներին սովորեցրեց մարտական արվեստ: Երեխաները մեծացան ու փորձ ձեռք բերեցին, այնուհետեւ բացեցին իրենց դպրոցը: Այդպես 1925 թվականին Բրազիլիայում առաջացավ ջիու-ջիուցին: Հետո Գրեյս եղբայրներն սկսեցին ուրիշ դպրոցներից մարտիկներ ներգրավել մրցելու համար: Նրանց միջև մարտերն ընթանում էին առանց սահմանափակումների, բայց կանոններ, այնուամենայնիվ, կային: Անվանումն էլ համապա-

տասխան էր. վալե-տուրո, որը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է՝ «ամեն ինչ թույլատրվում է»:

20-րդ դարի ամենահայտնի խառը հանդիպումը ճապոնական մարտիկ Քանոն Իտոկիի եւ ամերիկյան բռնցքամարտիկ Մոհամմեդ Ալիի միջև էր: Մենամարտն անցկացվեց 1976 թվականի հունիսի 26-ին եւ ավարտվեց ոչ-ոքի: Հանդիպումն ուշադրություն գրավեց եւ ազդեցություն ունեցավ MMA-ի հետագա զարգացման վրա: Ինոկին թույլ չէր տալու Ալիին մոտենալ իրեն՝ հյուծելով նրան ոտքի ցածր հարվածներով: Հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի, բայց քիչ էր մնում Ալին զրկվեր կարիերայից, քանի որ հաճախակի հասցված լուր-քիթերի հետեւանքով նրա մոտ գոյացել էին թրոմբոզներ:

20-րդ դարի 60-ական թվականներին Բրյուս Լին իմանալով Ջիբ Կուլ-ն-որ մարտարվեստի իր համակարգը: Կոնցեպցիան հիմնված էր մարտիկի՝ ցանկացած մրցակցի հետ մարտին ենթարկվելու կարողության վրա: Բրյուս Լին կարծում էր, թե լավագույն մարտիկը նա է, ով կարող է կռահել մրցակցի մարտավարությունը եւ մարտնչել մրցակցի կողմից օգտագործվող տեխնիկայի ներքո:

Խորհրդային սամբոն եւ բանակային ձեռնամարտն ավելի շատ են MMA հիշեցնում իրենց հնարքների հավաքածուով: Լինելով որպես հատուկ ջոկատների եւ խորհրդային բանակի մարտիկների պատրաստելու համակարգեր՝ դրանք ազդեցին MMA-ի վրա. տեխնիկան ու հնարքները կիրառվում են ժամանակակից մարտիկների կողմից: Վառ օրինակ է Ֆյոդոր Ենեյանցկին:


MMA-ն բարդ եւ տարաբնույթ մարզածել է, որն ունի կայանալու երկար պատմություն: MMA-ի վերջնական ձեւա-

ԱՆՏԱՔ ԿԵՐՈՍԱՄԱՐՏԻԿՆԵՐ ՇԻՇՈՒՄ ԵՆՔ ԵՎ ԽՈՆԱՐԿՈՒՄ

Ձիմկոր լինելը մասնագիտություն չէ, այլ կոչում: Իսկ եթե ոչ մասնագիտությամբ ես ոչ էլ կոչումով զինվոր չեմ, այլ հայրենիքի վտանգ սպառնալու դեպքում կամավոր մեկնում եմ ռազմաճակատ, իմացյալ մահվան դեմ առ դեմ՝ հերոսություն է: 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, երբ սկսվեց պատերազմը, զիտեմք, որ մարդկանց հոսքը չէր դադարում դեպի զինկոմիսարիատ, շատերը զինկոմի կանչին չէին սպասում, ներկայանում էին կամավոր:

Պատերազմում զոհված մեր հերոսամարտիկների անցած ճանապարհը լուսաբանող հերթական հոդվածով ներկայացնում ենք ազատամարտիկների, ովքեր մասնակցել են պատերազմին որպես կամավորականներ եւ պատմության գիրկն անցել հավերժ՝ իրենց կյանքը նվիրաբերելով հայրենիքի ազատությանը:

ՌԵԿԻԿ ՍԵՐՏԻԿԻ ՎԱՆՅԱՆ



Ծնվել է 1986 թվականի նոյեմբերի 25-ին Մարտակերտի շրջանի ճանկաթաղ գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 2003թ. ծառայել է Արցախի պաշտպանության բանակում: 2016թ. մասնակցել է քառօրյա պատերազմին: Աշխատել է Կաշենի լեռնահանքային համալիրում՝ որպես վարորդ: Ռեկիկն ազնիվ, հավատարիմ, աշխատասեր, խիզախ, ընկերասեր անձնավորություն էր: Դժվար պահերին ձեռք էր մեկնում ընկերներից: Ուներ մարդկային լավագույն հատկանիշներ: Կյանքով լցված, կյանքն ապրող ու գնահատող մարդ էր: Նա ամուր ոգով ու խիզախությամբ պայքարեց մինչև վերջ... Ու հավատում էր, որ խաղաղություն կլինի:

Պատերազմի առաջին օրից եղել է առաջնագծում՝ սկզբում Մարտակերտի դիրքերում, ապա Վաղիմիր Բալայանի անվան գումարտակի կազմում մասնակցել է Կարմիր շուկա գյուղի պաշտպանության մարտերին: Ձոհվել է նոյեմբերի 1-ին Կարմիր շուկա գյուղի պաշտպանության ժամանակ:

Ռեկիկ Վանյանն անմահացավ հանուն իր հարազատների, ընկերների ու հայ ժողովրդի:

ԳԵՂԱՄ ԳՎՐԻԿԻ ԱՎԱՆԵՑԱՆ



Ծնվել է 1995 թվականի ապրիլի 3-ին Մարտակերտի 2 ը ջ ա ն ի ճանկաթաղ գյուղում:

2 0 0 1 - 2013 թվականներին սովորել է ճանկաթաղի միջնակարգ դպրոցում: 2014-2016 թվականներին ծառայել է Արցախի պաշտպանության բանակում: 2013-2018 թվականներին սովորել է ԱրՊՀ «Աշխարհագրություն» բաժնում:

Գեղամը աշխատում էր Կաշենի հանքավայրում: Ռեկիկն ու Գեղամը բարեկամներ էին, մի գյուղի հարազատ զավակներ: Աշխատում էին միասին, բայց տարբեր գործեր անում: Գեղամն աշխատում էր լաբորատորիայում:

2020թ. սեպտեմբերի 27-ից Գեղամ Ավանյանը մասնակցել է Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմին՝ սկզբում Մարտակերտի պաշտպանական դիրքերում, այնուհետև Վաղիմիր Բալայանի անվան գումարտակի կազմում մասնակցել է Կարմիր շուկա գյուղի պաշտպանության մարտերին:

Գեղամն ու Ռեկիկը պատերազմի ժամանակ էլ միասին էին: Ճակատագրի բերումով հայրողիները, ցավոք, երկուսն էլ զոհվեցին նոյեմբերի 1-ին Կարմիր շուկա գյուղի պաշտպանության ժամանակ:

Գեղամը բնավորությամբ ազնիվ, ընկերասեր անձնավորություն էր: Ուներ բազում նպատակներ ու երազանքներ, որոնք այդպես էլ չիրականացան: Սիրած աղջիկ ուներ՝ Մանուշակ Աղաջանյանը, որի հետ պետք է ամուսնանար: Մանուշակ Աղաջանյանի հետ հանդիպել էին ընդհանուր բարեկամներ ունենալու շնորհիվ: Մանուշակը հաճախ էր գնում ճանկաթաղ՝ մորաքրոջ տուն, որտեղ էլ հաճախ հյուրընկալվում էին մորաքրոջ ամուսնու կողմից բարեկամներ, որոնցից էր Գեղամը: Այդպես հանդիպել էին, բայց սկզբնական շրջանում ընդամենը հաճելի ծանոթներ էին: Հետո Մանուշակի մորաքույրն ընտանիքով տեղափոխվեց Ստեփանակերտ, որտեղ էլ շարունակվեց բարեկամների հյուրընկալությունը, որի շրջանակում հանդիպում էին նաև Գեղամն ու Մանուշակը: Նրանց հանդիպումներն աստիճանաբար ծանոթ-բարեկամականից վերածվեցին սիրահար գույգերի հանդիպ-

ման: Երեք տարի շփվելուց հետո որոշեցին պաշտոնականացնել հարաբերությունները եւ ընտանիք ստեղծել: 2020 թվականի սեպտեմբերի 26-ին Գեղամը, բարեկամ-եղբոր՝ Ռեկիկի հետ գնաց Մանուշակի ընտանիքի հետ ծանոթանալու ու պաշտոնականացնելու հարցերը որոշելու: Ամեն ինչ լավ էր սեպտեմբերի 26-ին... Ցավոք, դա եղավ Գեղամի և Ռեկիկի առաջին ու վերջին այցը նրանց ընտանիք, իսկ Մանուշակի համար՝ վերջին հանդիպումը սիրած տղայի հետ, որի հետ համատեղ շատ նպատակներ ու երազանքներ ունեին իրականացնելու:

*Սեպտեմբերի 27-ին Գեղամը կամավոր մեկնեց պատերազմի: Մանուշակի հետ շփվում էին միայն հեռախոսազանգով, այն էլ հակիրճ տեղեկացնելով ու տեղեկանալով միմյանց որպիսությունից: Մանուշակը պատմում է, որ հոկտեմբերի վերջին օրը ստացվեց գրուցել մի քիչ ավելի երկար: Գեղամն ասաց, որ գտնվում են Կարմիր շուկայի պաշտպանական դիրքերում, լավ են, բոլորը ողջ են նույն կազմով, տեսական ժամանակ է, սպասում են հերթափոխի, ամեն պահի սպասում էին, որ իրենց փոխարինելու կգան, իսկ ինքն ասում էր, որ կգնա Հայաստան, որտեղ Մանուշակն էր նաև, կգնա տեսնելու, իսկ պատերազմն ավարտվելուց հետո նրան կտանի իրենց տուն առանց արարողության: Մանուշակն իր համաձայնությունը հայտնեց, հետո ասաց, որ երկար խոսեցին, կուզենար, որ Գեղամը կապի նաև ընտանիքի հետ: Չանգեց հարազատներին, նույնպես երկար խոսեց, հորդորեց, որ եթե իրեն բան պատահի, բանկային քարտն օգտագործեն ու Մանիկին (այդպես էր անվանում Մանուշակին) լավ մայրեն: Միգուցե կանխագույշ էր, իսկ միգուցե արդեն հասկացել էր, որ հերթափոխ այդպես էլ չի լինելու...

Նոյեմբերի մեկի լույս գիշերը զոհվեց Գեղամն իր մարտական ընկերների հետ միասին:

Հիանալի գծեր ուներ. հանգիստ, հավասարակշռված տղա էր՝ շրջապատի ու ընկերների հանդեպ միշտ ուշադիր: Կարոտին մի կերպ դիմացող Մանուշակը միայն դրական գծերով է նկարագրում Գեղամին, որն անմահացավ հազարավոր քաջորդիների նման՝ թողնելով բազում անկատար իղծեր, կարոտած սրտեր:

Ռեկիկ Վանյանն ու Գեղամ Ավանյանը Արցախի Հանրապետության ճակատագրի հրամանագրով հետմահու պարգևատրվել են «Արիության համար» մեդալով: Հուղարկավորված են ճանկաթաղի հուշահամալիրում:

ԱՐԵՆ ՀԱՄԱՅԱԿԻ ՕՍԻՊՈՎ

Ծնվել է 1984 թվականի ապրիլի 21-ին Ստեփանակերտում: Ավարտել է Ե. Չարենցի անվան հ.7 դպրոցը: Տիրապետում էր ավտոմեքենաների ընթացային մասի վերանորոգ-



ման արհեստին: ՊԲ ժամկետային ծառայությունն ավարտելուց հետո աշխատել է իրենց տան մոտակայքում գտնվող արհեստանոցում: Ժամանակի ընթացքում ձեռք է բերել բոլորին օգնող, ձեռք հասցնող, բարեխիղճ արհեստավորի համբավ: Մասնակցել է ապրիլյան պատերազմին՝ որպես կամավորական եւ եղել էղնիկներ կոչվող մարտական դիրքերում: 2020 թվականի 44-օրյա պատերազմի առաջին օրվանից կամավորագրվել է եւ մտել ԱՀ ՊԲ վերանորոգման բազա՝ որպես զինվորական մեքենաների ընթացային մասերի վերանորոգող: 2020թ. հոկտեմբերի 2-ին բազան հրթրակոծվեց: Արեն Օսիպովը ստացավ մահացու բեկորային վիրավորում՝ թողնելով իր հետեւում երեք զավակներին ու հղի կնոջը:

Կինը՝ Անուշ Օսիպովն, մեռավ հոգում երեխաների կարիքները: Պատմում է, որ ամուսինը շատ հոգատար էր, աշխատող, բոլորին ձգտում էր օգնել, մեծից փոքր դիմում էին նրան, նա էլ հասնում էր բոլորին: Շատ էր կապված ընտանիքին ու նվիրված տղամարդ էր: Ուզում էր, որ երեխաները ոչ մի կարիք չունենան, շատ ուշադիր էր: Արենը միշտ հորդորում էր, որ ոչ մի դեպքում կինը երեխաներին մեռակ չթողնի: Անուշն ասում է, որ չորրորդ երեխայի ծնվելու մասին երբ իմացավ, սկզբից չէր ուզում ինքը, բայց ամուսինը համոզեց ու հուսադրեց, որ անպայման չորրորդ երեխան էլ ունենան: Արենի ընտանիքում չորս երեխաներ էին: Ուզում էր, որ իրենն էլ այդպես լինի: Ցավոք, նա չտեսավ չորրորդ երեխայի ծնունդը:

Արեն Օսիպովը հուղարկավորվել է Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանոցում: Երեք ընտանիքի ճրագ մարտեց, երեք տան հեռասյուն փլվեց, ճակատագրեր խեղվեցին... Պատերազմը բաժանեց մեզ նրանցից, ովքեր հավերժի ճամփորդներ դարձան: Ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվի: Հիշում ենք եւ խոնարհվում ձեր հիշատակի առաջ, մեր հերոս կամավորական ազատամարտիկներ:

... MMA ԿԱՄ ԽԱՈՂ ՄԵՆԱՄԱՐՏԵՐ

վորումը կատարվեց 20-րդ դարի 90-ական թվականներին: Ժամանակակից խառը մենամարտերը ծեփավորվել են Բրազիլիայում, ճապոնիայում եւ ԱՄՆ-ում, որտեղ էլ հայտնվել են MMA-ի առաջին կազմակերպությունները: 1993թ. ԱՄՆ-ում անցկացվեցին առաջին մրցույթները UFC (Ultimate Fighting Championship) անվանմամբ: Չեմպիոնի տիտղոսի համար պայքարել են մեծամարտերի տարբեր դպրոցներ ներկայացնող վարպետներ: Հաղթողի կոչմանն արժանացավ Ռոյս Գրեյսին, որը բրազիլական ջիու-ջիցուի դպրոցի ներկայացուցիչ էր Գրեյսիների մարտական գերդաստանից: UFC-ի առաջին մարտերը կազմակերպվել էին մեկ նպատակով, ցուցադրել ներկայացում: Իսկ որպեսզի ներկայացումը դառնա ավելի հետաքրքիր ու արդիական, որոշել են պարզել, թե ով է երկրագնդի ամենաուժեղ մար-

տիկը: Պլանավորվում էր անցկացնել մի քանի մեկնագամյա մարտեր, բայց մարտերն ավելի ու ավելի էին ճանաչելիություն վայելում: Համդիսատեսին գրավում էր «կանոններ չկան» վանկարկումը, որն էլ, սակայն, դրեց կազմակերպության վերջը: Մարտերը քննադատվեցին ու արգելվեցին Ամերիկայի որոշ նահանգներում, որի հետեւանքով էլ հեռուստատեսությունը կորցրեց դրանց նկատմամբ հետաքրքրությունը: UFC-ն կործանման եզրին էր, բայց այդ գնվեց Zuffa LLC ընկերության կողմից երկու միլիոն դոլարով: Մարտի համար ընդ կանոններ սահմանվեցին,



ինչպես նաև լուծվեցին մարզական հանձնաժողովի հետ հարցերն ու տարածայնությունները: 2001 թվականին մարտերը վերադարձան օրինական հարթակ: MMA-ի մեկ ուրիշ խոշոր կազմակեր-

պության օրինակ է Pride Fighting Championship-ը: Դա հայտնվել է ճապոնիայում 1997 թվականին: Առաջին մարտն անցկացվեց նույն թվականին Տոկիոյում: Տասը տարվա ընթացքում PFC-ը մնում էր MMA-ի ամենահայտնի կազմակերպություններից մեկը: 2007-ին կազմակերպությունը նույնպես գնեց Zuffa LLC ընկերությունը:

Ներկայում MMA-ն ամենաարագ զարգացող մարզաձևերից է: Հիմնադրվում են նոր կազմակերպություններ ու դպրոցներ, աճում են տոմսերի վաճառքը, ՁԼՍ-ների անդրադարձները, հեռուստատեսության եւ համացանցի վիդեոների եթերները: Ինչպես նաև պատրաստվում

են խառը մենամարտերը մտցնել Օլիմպիական խաղերի ծրագրի մեջ:

Արցախի պատմության վտանգի ու արհավիրքների շրջանում էլ «պղծակալտ» արցախցի շարունակում է պայքարել ու արարել՝ յուրաքանչյուրն իր ոլորտում համառոտեցնելուց ցույց տալով հայրենի հողում ապրելու կամքի հզոր ուժը: Արցախի խառը մենամարտերի ֆեդերացիայի ամենամասնական չեն մնում եւ շարունակում են իրենց մարզումները՝ հաղթահարելով դժվարությունները: Իսկ նրանք, ովքեր թեկուզ մեկ անգամ նայել են խառը մենամարտերի մրցաշարեր, անշուշտ, հասկանում են, որ ռիսկում պայքարելու համար նման ներուժ ունեցող մարզիկները երբեք չեն նահանջի իրենց հողում ապրելու համար պայքարելիս:

Երկրորդ
Ս. ԱՎԱԳՅԱՆ

ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

«ՇՈՒՇԻ. ԱՄԷՆ». ՖԻԼՄ ՄԵՐ ՄԱՍԻՆ



Երիտասարդ կինոռեժիսոր Մարիամ Եզորյանը ավարտին է հասցրել ռեժիսոր Ռուբեն Գրիգորյանի «Շուշի. Ամեն» փաստագրական անավարտ ֆիլմը: Ստանձնած մեծ պատասխանատվության և կատարված աշխատանքի մասին է մեր գրույցը Մարիամ Եզորյանին հետ:


- Մարիամ, «Շուշի. Ամեն» փաստագրական ֆիլմը ռեժիսոր Ռուբեն Գրիգորյանի «Հայոց Արևելից կողմերի պատմություն. Արցախ» ֆիլմաշարի վեցերորդ ֆիլմն է, որը վարպետի մահվանից հետո Ղուբ Եզ ավարտին է հասցրել: Դե՛ռ էր շարունակել վարպետի աշխատանքը, որը նախ և առաջ ստեղծագործական մեծ պատասխանատվություն էր ենթադրում:

- Շատ մեծ պատասխանատվությամբ եմ մոտեցել գործին: Գիտակցական իմ ամբողջ կյանքում ընտանիքիս անդամներից լսել եմ պատմություններ Արցախյան հերոսամարտի, Շուշի քաղաքի կարևորության, հերոսամարտի մասնակցած և քաղաքն ազատագրած հերոսների մասին, որոնք կյանքը չեն խնայել ու իրենց արյամբ պատմություն են գրել: 2020 թվականի պատերազմի ընթացքում մտքովս հաճախ էր անցնում նկարահանման նպատակով Արցախ գնալ: Մի քանի փորձ արեցի, որ միանամ նկարահանող տարբեր խմբերի, բայց՝ անարդյունք: Նոյեմբերի 8-ից հետո մեր սույն դատարկություն էր, չէի կարողանում ընկալել կատարվածը: Անընդհատ մի հարց էր

գլխումս. իսկ ես ի՞նչ կարող եմ անել ստեղծված իրավիճակում համուն իմ երկրի ու իմ խղճի հանգստության համար: Եվ պատասխանը շատ սպասել չսովեց: Ջանգաճարեց վարպետիս կինը՝ Արցախի մարտից, որ «Հայոց Արևելից կողմերի պատմություն. Արցախ» ֆիլմաշարի սցենարի հեղինակն է և գլխավոր պրոդյուսերը: Նա առաջարկեց շարունակել ֆիլմաշարը: Դա, իհարկե, մեծ պատիվ էր, բայց, միևնույն ժամանակ՝ պատասխանատվության կրկնակի չափաբաժին: Ասել, թե ֆիլմը ստեղծել եմ այնպես, ինչպես Գրիգորյանը կաներ, կարծում եմ, չափազանցություն կլինի. դեռ երկար ճանապարհ ունեմ անցնելու, որ հասնեմ նշանակալի, բայց, հավատացե՛ք, ազնիվ եմ եղել իմ բոլոր քայլերում և հատկապես դա եմ կարևորում:

- Ո՞րն է ֆիլմի նպատակը: - Ֆիլմն ուղղված է Հայոց պատմության աղավաղումների դեմ: Շուշիի պատմությանն առնչվող անհերքելի փաստերի մասին նորից ու նորից խոսելիս պետք է հիշենք, որ դեռ կան հայերիս բնօրրան Շուշիի իրական պատմությանն անտեղյակ մարդիկ: Մեր ֆիլմն, ըստ իս, պիտի հետաքրքրի շատերին՝ անկախ ազգային պատկանելությունից: Ֆիլմի ստեղծման ընթացքում դիտել-ուսումնասիրել եմ համացանցում առկա նյութերը: Ցավով պիտի նշեմ, որ լատինատառ որոնման արդյունքում մեծ մասամբ թուրքական կամ ադրբեջանական քարոզչական նյութեր են գտնվում: Սրա մասին պետք է լրջորեն մտածել: Այլազգի միջին վիճակագրական մարդը, որը պարզապես լսել է Արցախի խնդրի մասին, որոնման արդյունքում փաստորեն կգտնի խեղաթյուրված տվյալներ ու կդառնա հակահայկական քարոզչության գոհ: Մի՞թե սա է մեր ուզածը: Մեծ հույս ունեմ, որ ֆիլմը կտարածվի հնարավորինս արագ, և շատերը կձանոթանան իրականությանը հետ: Սա մի կաթիլ է օվկիանոսում, բայց՝ շատ կարևոր կաթիլ:

- Զե՛ղ համար կարևոր նախապայման է եղել փաստական հիմքը:



կան հենք: Ֆիլմի գիտական ղեկավարը ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկավար, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Եղիկ Մինասյանն է: Ֆիլմի ընթացքում Շուշիի հայկականությունը հաստատող փաստերը ներկայացնում են ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Լյուբա Կիրակոսյանը, ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի վարիչ, պ.գ.դ. Դանիել Պետրոսյանը, պ.գ.դ. Գևորգ Տեր-Վարդանյանը և 1989-2021 թթ. ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Պատահական չէ, որ ֆիլմը «Победили

вместе» վավերագրական ֆիլմերի ռուսատառանյան անենամեծ փառատոնում ընդգրկվել էր հենց «Պատմությունը՝ կարողում» անվանակարգում: Ուրախությամբ պետք է նշեմ, որ ֆիլմը ստացավ հաստիկ դիպլոմ, ինչը մեզ շատ ոգևորեց: Ցուցադրումից հետո մարդիկ ասացին, որ լսել էին Արցախի խնդրի մասին, բայց ծանոթ չէին մանրամասներին ու հիմա շատ բան բացահայտեցին: Սա, կարծում եմ, ամենակարևոր ձեռքբերումն է ու հաղթանակը: - Գիտե՞մ, որ անիմատոր-ճարտարապետների մասնագիտական խումբը կազմել է Շուշիի ավերված չորս եկեղեցիների եռաչափ մոդելները: Պատմե՛ք այդ մասին:

- Անիմացիայի միջոցով ժամանակի ընթացքում կորսված ճարտարապետական գանձերը վերականգնելը կարմիր թելի պես անցնում է «Հայոց Արևելից կողմերի պատմություն. Արցախ» ֆիլմաշարի բոլոր ֆիլմերով: Դա վարպետիս՝ Ռուբեն Գրիգորյանի մտահոգացումն է, ինչը և շարունակվել է այս ֆիլմում ևս: Շուշիում Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցուց և Հովհաննես Սկրտչի կանաչ ժամ եկեղեցուց բացի կանգուն է եղել չորս եկեղեցի ևս, որոնք ժամանակի ընթացքում ավերվել են: Այս մասին, ցավով, քչերը գիտեն: Եռաչափ մոդելավորման շնորհիվ հնարավորինս հստակ կարելի է պատկերացում կազմել դրանց մասին:

Ֆիլմը ստեղծելիս աշխատել եմ մասնագետներ, առանց որոնց ես չէի ստանա այն արդյունքը, ինչը հիմա ունեմ: Շնորհակալ եմ բոլորին մեծ նվիրումի համար: Շնորհակալ եմ Գեորգի Ստեփանյանին՝ ֆիլմի կայացմանն աջակցելու համար, Մագդալինա Ջատիկյանին, որ քանի չի խնայել ու միշտ մեր կողքին է եղել, և, իհարկե, Ռուբեն Գրիգորյանի ընտանիքին՝ ինձ վստահելու համար: Այդ վստահության շնորհիվ եմ շարունակում վարպետիս գործն ու համոզված եմ՝ կանգ չեմ առնելու:

Զրույցը Վուլա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ

ԱՃՈՒՐԳ-ՄՐՅՈՒՅՈՒ

«Անանկության մասին» ԱՅ օրերի 89-րդ հոդվածի համաձայն 2023թ. փետրվարի 17-ին, ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից, ԱՅ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ վաճառք՝ հետևյալ լոտերով.

Լոտ 2 - Հարիչ(միքսեր)՝ Steno PL60L/3VP 1հատ, 2 հատ ամանով 60 լիտր, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 550 400 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 3 - Կրեմի սրկիչ՝ DE DANIELI RMP83՝ 15լիտր, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 192 000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 4 - Խմորի գնդեր սարքող սարք՝ RAM S30 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 512 000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 5 - Խմորի գնդեր՝ K-M130, 130կգ, 1 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 640.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

ված շուկայական արժեքին:

Լոտ 6 - Վառարան Bassanina zoom 1212, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 1.280.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 7 - Դարակաշար ռատացիոն վառարանի համար՝ 50x70սմ (18դարակ), 7 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 179.200 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 8 - Խմորի գնդեր բացող սարք՝ Kempflex SF600/1400, 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 448.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 9 - Դարակաշար՝ թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ(18դարակ), 7 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ)՝ 72հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 270.080 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 10 - Դարակաշար՝ թիթեղներով ռատացիոն վառարանի համար՝ 60x80 սմ(18դարակ) 18 հատ, մետաղյա թիթեղներ(դարակ)՝ 108 հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 270.080 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

վում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 645.120 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 11 - Խմորի գնդիչ՝ EFFEDUE KG.160, 160կգ 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 832.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 12 - Խմորի հասունացման խցիկ՝ 294x204x200սմ չափսի, պատերը՝ ինքնաշեն, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 576.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 13 - Վառարան Bassanina rotor 57՝ 1հատ, նախկինում օգտագործված, գտնվում է անաշխատունակ վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 1.280.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գործող գույքի գնահատված շուկայական արժեքին:

Լոտ 14 - Թիթեղյա դարակներ՝ 150հատ, նախկինում օգտագործված, գտնվում է բավարար ապրանքային վիճակում: Սեփականատեր՝ «Մայակ» ՍՊԸ, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ պարտքերի դիմաց: Լոտի մեկնարկային գինը կազմում է 96.000 ՀՀ դրամ, որը համապատասխանում է գույքի գնահատված շուկայական արժեքին:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպոսիտ անձնագրի

պատճենը, իսկ ԻՍ դեպոսիտ՝ պետգրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գին 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/դ հ/հ 22301050288600 :

Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00-ն, կարող են հայտ ներկայացնել ԼԴՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ.097-22-29-22 կամ 043-08-17-33:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյան

ՈՒՂՂՈՒՄ

«Լուսարար»-ի 2022թ. հ.35-ի 3-րդ էջում թյուրիմացաբար տեղադրվել է գետեղված հողվածի շարվածքի չորքազրկված տարբերակը: 2-րդ սյան 2-րդ պարբերության 15-րդ տողում կարդալ՝ «... մասնակցել է Կուրսի ճակատամարտին», 3-րդ սյան 3-րդ պարբերության վերջից 5-րդ տողում՝ «Այդպես մենք հասանք հաղթանակի» (1977):

Հայցում ենք ընթերցողների ներողանոթությունը:

ՀԻՄՆԱԳԻՐ՝ ԼՈՒՍԱՐԱՐ ԻՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Տպաքանակ՝ 1650: Ստորագրված է տպագրության 31.01.2023թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: